

1909Ի ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
Lannes@freenet.am

ՄՈՒՏՔ

Հայոց Յեղասպանութեան գործընթացը (1894-1922), իր սանձագեր-ծուժից ի վեր դտնուել է բազմաթիւ երկրների պատմաբանների զանա-զան սերունդների ուշադրութեան կենտրոնում: Այն լայն արձագանգ-ների է արժանացել Յեղասպանութեան ժամանակակից եւրոպացի պատ-մաբանների, քաղաքական եւ կրօնական գործիչների, մտաւորականնե-րի շրջանում:

Թէպէտ այսօր հրապարակի վրայ արդէն առկայ է հարուստ եւ բազ-մաբնոյթ պատմագիտական գրականութիւն, այդուհանդերձ, Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը ուսումնասիրողները մինչ վերջերս չէին լուսարանել դրա առնչութեամբ պատմագիտական մտքի զարգաց-ման նուաճումները եւ վերիվայրումները տարբեր երկրներում: Այս ա-պարէզում հարկ է ընդգծել Հայաստանի ժամանակակից պատմաբան-ների ներդրումը, որոնք ձեռնարկել են առաջին քայլերն այս ուղղու-թեամբ¹:

Հայոց Յեղասպանութեան գիտական ուսումնասիրութեան ասպա-րէզում հարուստ եւ վաղեմի պատմագիտական աւանդոյթներով ա-ռանձնանում է Ֆրանսիական պատմագրութիւնը, որի նուաճումները եւս երկար ժամանակ մնացել էին ստուերում²: Սոյն յօդուածում կ'անդ-րադառնանք 1909ի Կիլիկիայում տեղի ունեցած ջարդերի պատմութեան ուսումնասիրութեան ոլորտում՝ իրադարձութեան ժամանակակից ֆը-րանսիացի պատմաբանների ուսումնասիրութիւններին: Ի դէպ, Ի. դա-րի 10ականների երկրորդ կէսից մինչ 90ականներն այս թեման ֆրան-

սիացի պատմաբանների ուշադրութիւնից ընդհանրապէս դուրս է մնացել:

Թեմայի արդիականութիւնը պայմանաւորուած է մի շարք հանգամանքներով:-

ա- Ժամանակակից թուրքական պատմագիտութեան որդեգրած՝ Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը ժխտելու դիրքորոշման դատապարտմամբ եւ հերքմամբ: Առաջադրուած մի շարք թեզեր ամբողջութեամբ համընկնում են կիլիկիահայութեան ոչնչացմանն առնչուող հրահանգներն ի կատար ածած Օսմանեան տեղական պաշտօնեաների՝ այդ իրադարձութեանը տուած մեկնաբանութիւններին: Կիլիկեան ողբերգութեան ժամանակակից Ֆրանսիացի հեղինակները՝ իրենց նշանակութեան առումով ոչ-համարժէք աշխատութիւններում, թուրք պատմաբանների թեզերին անուղղակիօրէն տալիս են արժանի հակահարուած:

բ- 1909ի կոտորածներին վերաբերող Ֆրանսիացի հեղինակների հաւաստումները հիմնաւորում են ժամանակակից ցեղասպանագէտների առաջադրած՝ Յեղասպանութեանն իրրել երեւոյթի մեկնաբանութեանն առնչուող մի շարք հայեցակարգային դրոյթներ, որոնք բնորոշ են տարբեր Յեղասպանութիւնների, այդ թւում՝ Հայոց Յեղասպանութեանը:

գ- 1909ի կիլիկեան կոտորածների պատմութիւնը վերջին տարիներին կրկին իր վրայ է բեւեռել Հայոց Յեղասպանութեան պատմութեան՝ թէ՛ արտասահմանեան³ եւ թէ՛ հայաստանեան⁴ մասնագէտների ուշադրութիւնը: Ըստ այդմ՝ նրանց Ֆրանսիացի նախորդների միեւնոյն ասպարէզում ներդրած աւանդի ուսումնասիրութիւնը, ձեռք է բերում մեծ նշանակութիւն:

1909ի ԿԻԼԻԿԵԱՆ ԶԱՐԴԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ

Հայոց Յեղասպանութեան գործընթացին բնորոշ է անհամաչափ, փուլային զարգացումը: 1909ի կիլիկիահայութեան հանդէպ կատարուած կոտորածը՝ 1890ականների կէսերին սանձազերծուած Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի եւ 1915ի Մեծ Եղեռնի միջեւ արձանագրուած՝ հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականութեան ամենածաւալուն դրսեւորումն է, որին պատմաբանները տուել են տարբեր գնահատականներ: Ըստ ընդունուած տեսակէտի՝ 1909ին կիլիկիայում տեղի են ունեցել հայկական կոտորածներ: Ժամանակակից պատմաբաններից ոմանց մօտեցումը, սակայն, փոքր-ինչ այլ է: Ֆրանսիացի պատմաբան Իւ Տերնոնն իրադարձութիւնը բնորոշում է իրրել «ցեղասպանային կո-

տորած»⁵, որով նկատի ունի այնպիսի մի «միտում, յայտանիշների ամբողջութիւն, որոնք թոյլ են տալիս երկիւղել Յեղասպանութեան իրականացումից»⁶: Ֆրանսիացի մէկ այլ պատմաբան՝ Ա. Ասսօն, 1894-1896ի եւ 1909ի կոտորածները համարում է 1915ի Յեղասպանութեան նախբազանք⁷: Հայաստանցի պատմաբան Հայկ Ղազարեանն իրադարձութիւնը բնորոշում է իրրեւ «Յեղասպանութեան պատմութեան ընդհանուր եւ արիւնոտ շղթայի յիշարժան օղակներից մէկը»⁸, ինչն ամբողջութեամբ համահունչ է մեր կարծիքին: Սակայն միաժամանակ նա բազմիցս յիշատակում է նաեւ «կիլիկիահայութեան Յեղասպանութեան»⁹ մասին, իրադարձութիւնը, փաստօրէն, անջրպետելով Հայոց Յեղասպանութեան գործընթացից: Նման մօտեցումն համընկնում է ամերիկացի ցեղասպանագէտ Ռոբերտ Մելսոնի առաջադրած՝ Յեղասպանութեան իրրեւ երեւոյթի տիպարանութեան՝ չորս կէտից բաղկացած հայեցակարգին, ըստ որի՝ 1909ի իրադարձութիւնները կարելի է բնորոշել իրրեւ «ներքին, մասնակի Յեղասպանութիւն»¹⁰:

Եթէ հաշուի առնենք, որ 1909ի կիլիկիահայութեան բնաջնջումը կազմակերպուել է իրականացուել է պետական քաղաքականութեան մակարդակով, կանխամտածուածութեան եւ զոհերի ազգային պատկանելիութեան հիման վրայ, որոնք Յեղասպանութեան իրրեւ երեւոյթի հիմնական բնորոշիչներից են, ապա՝ իրադարձութիւնն, անտարակոյս, մեր համոզմամբ, հարկ է բնորոշել իրրեւ Հայոց Յեղասպանութեան երկարատեւ գործընթացի բաղկացուցիչ մաս:

1909ի հայկական կոտորածների պատասխանատուութիւնն, անտարակոյս, բարդւում է գլխաւորապէս երիտթուրքերի վարչակարգի վրայ, որը 1909ի Մայիսի 31ի համիդեան յեղաշրջումից շատ աւելի վաղ է ծրագրել եւ նախապատրաստել կիլիկիահայութեան բնաջնջումը: Պատմաբաններից ոմանք հարցը մեկնարանում են գլխաւորապէս այս կրտրուածքով, այն հիմնաւորելով, նաեւ արխիւային փաստաթղթերով (մասնաւորապէս՝ Ղազարեանը): Փոխարէնը, սակայն, անհրաժեշտ ուշադրութիւն չեն դարձնում սուլթանական վարչակարգի մեղսակցութեան բացառապատման անհրաժեշտութեան վրայ¹¹: Ըստ մէկ այլ տեսակէտի՝ որը, մեր կարծիքով, աւելի ընդունելի եւ ընդգրկուն է, երիտթուրքերի նախապատրաստած՝ կիլիկիահայութեան ոչնչացմանն անմասնակից չեն եղել Աբդուլ Համիդի համախոհները¹², որոնք օգտուելով բնածեւոյթ պատեհ առիթից՝ սուլթանական յեղաշրջման յաջորդ օրն իսկ ոչ միայն չեն կասեցրել հայկական ջարդերի հասունացած գործընթացը, այլեւ նպաստել են դրա իրականացմանը, քանզի այն համապատասխա-

նել է իրենց քաղաքական նպատակներին: Մեր կարծիքով, սակայն, անընդունելի է կիլիկեան կոտորածներից երիտթուրքերին պատասխանատուութիւնից զերծ պահելուն եւ այն ամբողջութեամբ սուլթանական վարչակարգի վրայ բարդելուն միտուած՝ որոշ պատմաբանների եւ ցեղասպանագէտների առաջադրած տեսակէտը¹³:

Իրականում, երիտթուրքերի յղացած 1909ի կոտորածներն իրականացուել են թէ՛ նրանց եւ թէ՛ համիդեան վարչակարգի ջանքերով եւ առանձնացել՝ գոհերի նկատմամբ գործադրուած սոսկալի դաժանութեամբ:

Կիլիկիահայութեան ոչնչացման իրողութիւնն աննկատ չի մնացել եւրոպական տարրեր երկրներում, այդ թւում՝ Ֆրանսիայում:

Բազմաթիւ Ֆրանսիացի պատմաբաններ ի սկզբանէ ջանքեր են գործադրել իրավիճակի հաւաստի պատկերը եւրոպական հանրութեանը ներկայացնելու ուղղութեամբ, իրադարձութեան շուրջ առաջադրել զանազան, դեռեւս ոչ-սպառիչ մեկնարանութիւններ: Թէպէտ նրանց ներդրումը 1909ի կոտորածների ուսումնասիրութեան ասպարէզում թէ՛ ծաւալի եւ թէ՛ քննական վերլուծութիւնների խորութեան առումով, զիջում է 1890ականներին տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի ուսումնասիրութեան ոլորտում ԺԹ. դարի վերջ-Ի. դարի սկզբի Ֆրանսիական պատմագիտական մտքի նուաճումներին, այդուհանդերձ, այն եւս արժանի է ուշադրութեան:

GEORGES BRÉZOL

Այստեղ քննարկուող ժամանակաշրջանում Ֆրանսիական պատմագրութիւնը, ի տարրերութիւն 1890ականների¹⁴, անհրաժեշտ ուշադրութիւն չի դարձրել սկզբնաղբիւրների հրատարակութեան վրայ:

1909ի կիլիկիահայութեան բնաջնջման գործընթացի մանրամասներն արտացոլում է միայն Ժորժ Բրեզոլ կեղծանուամբ՝ Հայագգի Պետրոս Ազնաւուրի¹⁵ աշխատասիրութեամբ 1911ին լոյս բնծայուած փաստաթղթերի ծաւալուն ժողովածուն¹⁶: Գրքում ամփոփուած բազմարնոյթ, նրա հաւաստմամբ՝ «արժանահաւատ փաստաթղթերն»¹⁷ ունեն, մասնաւորապէս հայկական ծագում: Դրանք հայ ականատեսների եւ հոգեւոր գործիչների զեկուցագրեր, նամակներ, հայկական մամուլում տպագրուած յօդուածներ են, որոնք, այդուհանդերձ, հնարաւորութիւն են բնծեռում ընդհանուր պատկերացում կազմելու կոտորածների մասին: Ժողովածուի կազմողն, ամենայն հաւանականութեամբ, աւելի ցցուն դարձնելու համար թուրքական իշխանութիւնների որդեգրած դիրքորո-

չումը հայկական կոտորածների մեկնարանութեան հարցում, գետեղել է նաև թուրքական ծագում ունեցող եւ իրադարձութեան պատկերը խեղաթիւրող փաստաթղթեր: Միեւնոյն ժամանակ Բրեզոյն ամբողջութեամբ շրջանցել է եւրոպացի ժամանակակիցների վկայութիւնները (այս հարցի շուրջ սակայն ժողովածուի առաջարկում նա մեկնարանութիւններ չի տալիս):

Ժողովածուի բաժիններում դասակարգուած փաստաթղթերն արժանահաւատ տեղեկատուութիւն են հաղորդում թէ՛ Հայոց Յեղասպանութեան հերթական փուլի՝ 1909ի կիլիկիահայութեան ողբերգութեան ընթացքի եւ թէ՛ իրադարձութեանը՝ հակադիր բեւեռներում գտնուող կողմերի տուած գնահատականների մասին: Հարկ է նշել, որ հրապարակուած փաստաթղթերում կոտորածների ծաւալումը ներկայացուած է լայն յետնախորքի վրայ: Դրանք լուսարանում են ոչ միայն Աղանալում եւ յարակից տարածաշրջաններում տեղի ունեցած ոճրագործութիւնները, այլեւ Հաճընում, Կարս Փագարում, Դէօրթ Եոլում եւ այլ վայրերում հայերի մղած ինքնապաշտպանական մարտերը, սակաւաթիւ թուրք պաշտօնեաների՝ հայերի նկատմամբ դրսեւորած բարեացակամ վերաբերմունքը, եւն.:

Ժողովածուում ամփոփուած վաւերագրերի գերակշռող մասն անստորագիր է: Հայոց Յեղասպանութեան պատմութեանն առնչուող փաստաթղթերի ժողովածուների հրատարակիչները մէկ անգամ չէ, որ որդեգրել են նման սկզբունք¹⁸, քանզի հակառակ պարագայում, նրանք, անտարակոյս, վտանգի կ'ենթարկէին վաւերագրերի՝ Օսմանեան Կայսրութեան տարածքում բնակուող հեղինակների կեանքը:

Ժողովածուում կոտորածների պատմականութիւնը հաւաստող՝ շրջանառութեան մէջ դրուած վաւերագրերը կրում են գլխաւորապէս նկարագրողական բնոյթ: Դրանց գերակշռող մասում չկան վերլուծութիւններ: Հեղինակները սահմանափակում են հիմնականում ընդհանուր բնոյթի դիտողութիւններով, ինչը վկայում է, որ նրանք դեռեւս չեն ըմբռնել ոչ միայն իրադարձութեան պատճառները, այլեւ ի վիճակի չեն եղել յստակօրէն կողմնորոշուելու կոտորածների կազմակերպիչների ինքնութեան բացայայտման հարցում:

Վաւերագրերի հեղինակներից շատերը շրջանցելով կոտորածների իրական կազմակերպիչներին՝ երիտթուրքերին, սահմանափակուել են կիլիկիայի Օսմանեան ղեկավարների, մասնաւորապէս՝ Աղանայի վիլայէթի կուսակալ Զեւաղ բէյի եւ զինուորական հրամանատար Մուսթաֆա Ռեմզի փաշայի դիրքորոշման դատապարտմամբ, որոնք, անտարա-

կոյս, ունեցել են պատասխանատուութեան իրենց մեծ, սակայն ոչ-վճռորոշ բաժինը: Նրանցից մէկը Ջեւադին անուանում է «հրէշ, որը հայերի կոտորածների կազմակերպիչներից եւ ղեկավարներից է»: Կուսակալին նա համեմատում է Ներոնի հետ, որը «հրճում էր անգթօրէն կազմակերպուած հրդեհներով եւ կոտորածներով»¹⁹:

Սուեդիայի իրավիճակին նուիրուած՝ ինչ-որ չափով վերլուծական բնոյթի սակաւաթիւ յօդուածներից մէկի հեղինակն ուշադրութիւն է հրաւիրում Անտիոքում բռնկուած հրդեհի կազմակերպիչների վրայ, որոնք եղել են քաղաքի պաշտօնեաները եւ աղաները²⁰: Այդուհանդերձ, կոտորածների հայազգի ժամանակակիցները, չնայած իրադարձութիւնների շուրջ արժանահաւատ տեղեկութիւնների հաղորդմանը, դժուարանում են բացայայտել կոտորածների իրական կազմակերպիչներին: Նրանցից ոմանք կոտորածների հրահրիչներ համարում են Օսմանեան տեղական պաշտօնեաներին, իսկ պատասխանատուութիւնը վերագրում են ոստիկանութեան թողաուութեամբ գործող հրոսակախմբերին²¹, կամ պատասխանատուներին դիմագերծելուն առնչուող հարցի կապակցութեամբ սահմանափակում են սոսկ՝ «ոչ ոք չգիտի» հակիրճ, կամ խուսափողական պատասխանով²²:

Սակաւաթիւ վաւերագրերի հեղինակներ, որոնց ինքնութիւնը չի ճշգրտում, ջանում են, այդուհանդերձ, դրսեւորել աւելի ընդգրկուն մօտեցում եւ կիլիկեան կոտորածների պատասխանատուութիւնն իրաւամբ բարդում են Օսմանեան պետութեան՝ Կոստանդնուպոլսում գրտնուող ղեկավարների վրայ, դեռեւս ի վիճակի չլինելով սակայն բացայայտելու իրական կազմակերպիչներին: Անտիոքի տարածաշրջանում տեղի ունեցած հայկական կոտորածներին անդրադարձած հեղինակներից մէկը գտնում է, օրինակ, որ դրանք իրականացնողները «նպատակ ունէին տառացիօրէն կենսագործել Երլըզլի հրահանգները»²³: Ըստ ստացուող տպաւորութեան՝ կոտորածների պատասխանատուութիւնը նա բարդում է միմիայն սուլթանական վարչակարգի վրայ, քանզի համոզուած է, որ 1908ի սահմանադրութեան վերահաստատումից յետոյ «ազատ եւ երջանիկ» կեանքով ապրող հայերն Անտիոքի տարածաշրջանում բնաջնջուել են, փաստօրէն, համիդեան յեղաշրջման հետեւանքով²⁴: Մէկ այլ հայազգի հեղինակի կարծիքով՝ Ադանայում հայկական կոտորածներ տեղի չէին ունենայ, եթե Կոստանդնուպոլսում չիրականացուէր սուլթանական յեղաշրջումը: «Այս արիւնոտ անցքերի տխրահոշակ հերոսները նախքան գործողութիւնների դիմելը՝ քաջալերանքները ստացել էին մայրաքաղաքից», - գրում է նա²⁵:

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, հայ ժամանակակիցների շրջանում միանգամայն ակնյայտ է երիտթուրքերին հայկական կոտորածների պատասխանատուութիւնից զերծ պահելու միտումը, ինչը հետեւանք է նրանց մօտ արմատացած այն թիւր մտայնութեան, թէ 1908ի յեղափոխութիւնից յետոյ վերջիններս իրր հետամուտ էին սահմանադրութեամբ հռչակուած վեհ սկզբունքների կենսագործմանը:

Չրմբունելով իշխանութեան եկած քաղաքական նոր ուժերի ազգայնամոլ քաղաքականութեան էութիւնը եւ չկողմնորոշուելով Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած փոփոխութիւնների յորձանուտում, նրանք փոքր-իսկ կասկած չեն տածել երիտթուրքերի՝ կիլիկիայում եւ յարակից տարածքներում հայկական կոտորածների կազմակերպման գործում ունեցած ղեկավար դերի շուրջ:

ՀԱՅ ԿՂԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Շատ աւելի բացայայտ են կիլիկիահայութեան հոգեւոր առաջնորդների՝ Օսմանեան տարբեր բարձրաստիճան պաշտօնեաներին յղած նամակները: Նրանք կազմակերպիչների ինքնութեան հարցում յայտնել են իրենց հայրենակիցների դիրքորոշմանը համահունչ կարծիքներ:

Ադանայի կաթոլիկ հայերի Առաջնորդ, Յակոբ եպիսկոպոս Թէրզեանն Օսմանեան խորհրդարանի նախագահ Նուրի բէյին յայտնում է, որ Ադանայի կոտորածների առաջին փուլի ընթացքում հայերի հանդէպ գործադրուել են՝ Լենկ Թեմուրի եւ Չինգիզ խանի ժամանակներից ի վեր նախադէպը չունեցող դաժանութիւններ: Ըստ նրա՝ հայերը ենթարկուել են «աննկարագրելի վայրագութիւնների»²⁶: Նման հաւաստումներից գատ, հոգեւոր գործիչներից ոմանք իրաւամբ մատնանշում են կիլիկիահայութեան հնազանդութիւնն Օսմանեան իշխանութիւններին եւ դրանով իսկ բացառում հայերի՝ կոտորածների սանձազերծմանը պատճառ դառնալու ենթադրութեան հաւանականութիւնը:

Հայ հոգեւոր գործիչները, սակայն, չեն սահմանափակում հայ ժողովրդի հանդէպ կիրառուած բռնութիւնների հաւաստմամբ: Յատկանշական է, որ նրանց գրագրութիւններում բազմիցս ընդգծւում է եւ հիմնաւորւում Յեղասպանութեան իրրեւ երեւոյթի հիմնական բնորոշիչներից մէկի՝ կիլիկիահայութեան բնաջնջման պարագայում կանխամտածուածութեան առկայութիւնը: Թէրզեանն, օրինակ, նշաւակում է Օսմանեան կառավարութեանը, որը «մահմեդականներին թոյլատրել է անգթօրէն յարձակուել քրիստոնէակաների վրայ եւ նոյնիսկ աջակցել նրանց առաջադրանքի կատարման ընթացքում»²⁷:

Հիմնուելով հաւաստի տուեալների վրայ՝ հայ հոգեւոր գործիչները շեշտում են, որ մահմեդականները նախապատրաստուած էին կոտորածներին, եւ բացառում է պատահականութեան հաւանականութիւնը դրանց իրականացման պարագայում: Վկայակոչելով մի շարք անսքող փաստեր, որոնք առնչում են կոտորածների ընթացքում մահմեդականների, այդ թւում թուրք պաշտօնեաների՝ սպիտակ չալմա կրելուն, քրիստոնեաների խանութների վրայ՝ նախօրօք արուած նշաններին, որոնք հնարաւորութիւն են ընձեռել դրանք զանազանի մահմեդականներին պատկանող խանութներից, Թէրզեանը հիմնաւորում է հայ բնակչութեան ունեցուածքի թալանին խնամքով նախապատրաստուելու իրողութիւնը²⁸:

Միանգամայն հիմնաւորուած են Թէրզեանի մեկնարանութիւններն Ադանայի կոտորածների երկրորդ փուլի կապակցութեամբ, որոնք յանգեցրել են աւելի սարսափելի աւերածութիւնների, եւ հրդեհի հետ մէկտեղ քաղաքը վերածել են «ամայի գերեզմանատան»²⁹: Իբրեւ իրադարձութեան կանխամտածուածութեան հիմնաւորում, նա վկայակոչում է նաեւ Ջեւադ բէյի եւ պաշտօնատար այլ անձանց հակահայ անթաքոյց տրամադրուածութիւնը, ովքեր շնայած հայերին նախապէս տուած խոստումներին, ոչինչ չեն ձեռնարկել նրանց վիճակի բարելաւման համար: Նման դիրքորոշումն իսկ նա անվարանօրէն համարում է անսքող փաստ, որը «որեւէ կասկած չի բողոնում իրադարձութիւնների ծագման եւ նպատակի վերաբերեալ»³⁰:

Նրա քննադատութեան կիզակէտում Ջեւադ բէյն է, որը հայերին խոստացել էր փակել Ադանայում լոյս տեսնող եւ նրանց հասցէին գրքապարտութիւններ ու կեղծ մեղադրանքներ տարածող տեղական՝ իթթիհադական *Իթիդալ* լրագիրը³¹, սակայն իր խոստումը չէր կատարել, ինչը «յաւելել է հայերի դժբախտութիւնները»³²:

Ընդհանուր առմամբ, հաշուի առնելով, որ թէ՛ Ադանայում եւ թէ՛ յարակից տարածաշրջաններում հայերի նկատմամբ գործադրուած զանազան բռնութիւնները սկսուել են միաժամանակ եւ միեւնոյն ձեւով, Թէրզեանը մէկ անգամ եւս հաւաստում է, որ դրանք «կազմակերպուել են շարագուշակ դիտաւորութեամբ»³³: Մատնանշելով տարածաշրջանի քրիստոնեաներին ոչնչացնելու նպատակ հետապնդող կազմակերպութիւնների գոյութեան փաստը, Թէրզեանը կոտորածների կազմակերպիչների բացառապատման առնչութեամբ ջարդերի իրականացումը շաղկապում է նոյն օրերին կոստանդնուպոլսում տեղի ունեցած սուլթանական յեղաշրջման հետ եւ ընդգծում դրանց միջեւ առկայ կապը³⁴:

Հայ հոգեւոր գործիչների՝ կիլիկեան կոտորածների կազմակերպիչների բացառապատման հարցում որդեգրած դիրքորոշմանը խիստ բնորոշ է Աղանայի կաթողիկ հայերի եպիսկոպոս, նորին սրբազնութիւն Պոլի օրինակը: Վերջինս կոտորածների սաղրիչներ է համարում մահմեդական բարձրաստիճան պաշտօնեաներին, ովքեր տարածել են Ջեւաղ բէյի եւ Մուսթաֆա Ռեմզի փաշայի հրահանգները: Հենց այդ պաշտօնեաներն են, նրա կածիքով, մահմեդականներին թոյլատրել կողոպտել, հրկիգել հայերի ունեցուածքը եւ պատճառել նրանց ոչ միայն նիւթական վնասներ, այլեւ մարդկային մեծ կորուստներ³⁵:

Հայերի ապստամբութեան վարկածի կապակցութեամբ, որն ըստ Օսմանեան դեկալարների մեկնարանութեան՝ իրր պատճառ է դարձել հայկական կոտորածներին, Աղանայի հայ հոգեւոր առաջնորդները կրքոտութեամբ ընդվզում են իրենց վերագրուող՝ իրականութեան հետ որեւէ առնչութիւն չունեցող այդ յերիւրանքի դէմ եւ թուրք բարձրաստիճան պաշտօնեաներին հաւաստիացնում, որ երբեք չեն ապստամբել եւ աւելին՝ այդ մասին երբեւէ նոյնիսկ չեն խորհել³⁶: Փոխարէնը, հերթական անգամ ընդգծելով հայերի «ժաւատարիմ եւ խոնարհ» ենթականեր լինելու հանգամանքը, նրանք գտնում են, որ իրենց հայրենակիցները դարձել են գրպարտութեան եւ բանսարկութիւնների զոհ, որոնց տարածման համար մեղադրում են սուլթանական վարչակարգի կողմնակիցներին եւ որոշ մոլեռանդ մահմեդականներին³⁷: Յատկանշական է, որ հայ հոգեւոր առաջնորդները հաւաստում են իրենց հաւատարմութիւնը թէ՛ երիտթուրքերին եւ թէ՛ սահմանադրութեանը նուիրուած բոլոր Օսմանեան քաղաքացիներին: Հաւաստելով իրենց նուիրուածութիւնն Օսմանեան սահմանադրութեանը, նրանք իրենց պատրաստակամութիւնն են յայտնում ծառայելու Օսմանեան հայրենիքին³⁸:

Մեր համոզմամբ՝ կոտորածների կազմակերպիչների շուրջ լիարժէք պատկերացումներ չունենալու հանգամանքով պէտք է բացատրել դրանց պատճառներին առնչուող՝ հայ հոգեւոր գործիչների մակերեսային մեկնարանութիւնները: Թերեւս ի վիճակի չլինելով ըմբռնելու Հայոց Յեղասպանութեան հերթական փուլի իրականացման բուն պատճառները (մեծ թիւով հայերի կենտրոնացում՝ 1894-1896ի կոտորածներից խուսափած Աղանայում, գարնան ամիսներին կայսրութեան տարբեր շրջաններից հայ մշակների հոսքն Աղանա, կիլիկիահայերի բարգաւաճ վիճակը, առեւտրի, արդիւնարերութեան, գիւղատնտեսութեան ոլորտներում հայերի ծաւալած գործունէութեան արգելակման ցանկութիւն)³⁹, նրանք անտեսելով դրանց գերակշռող մասը, ուշադրու-

թիւնը կենտրոնացրել են երկրորդական հանգամանքների վրայ: «Միակ բանը, ինչը կարող էր մեզ՝ քրիստոնեաներիս այս դժբախտութիւնների գոհը դարձնել, կարող է լինել նախ՝ մեր կրօնը, մեր ձգտումը դէպի առաջադիմութիւն, սահմանադրութեան հոշակման ժամանակաշրջանում մեզ համակած ուրախութիւնը», - նշում է վաւերագրերից մէկում⁴⁰: Չնայած վերջին փաստարկն ունեցել է որոշակի նշանակութիւն⁴¹, նրանք, այդուհանդերձ, հերքում են սահմանադրութեան հակառակորդների հիւսած դաւերին առնչուող վարկածը, ըստ որի իրադարձութեան պատճառ է դարձել բացառապէս հայերի նուիրուածութիւնը սահմանադրութեանը: Այս կարծեցեալ փաստարկի կապակցութեամբ, նրանք միանգամայն իրաւամբ մատնանշում են, որ սահմանադրութեան կողմնակիցների թւում եղել են ոչ միայն հայեր, այլև երիտթուրքեր: Այս առիթով նրանց գրութիւններից մէկում նշում է. «Ոչինչ ատիւն անհիմաստ եւ անհեթեթ չէ, որքան քրիստոնեաներին յեղափոխական [իմա՝ յեղաշրջական - Վ.Պ.] բնութագրելը... քանզի սահմանադրական վարչակարգի բարերարութիւնները եւ առատելութիւնները չընդունելը քրիստոնեաների կողմից կը լինի ամենամեծ անհեթեթութիւնը»⁴²:

Ըստ այդմ՝ Ազանայում տեղի ունեցած կոտորածները նրանք պատճառարանում են կոստանդնուպոլսում սուլթանական յեղաշրջմամբ: Լռութեան մատնելով երիտթուրքերի դերը կիլիկիահայութեան բնաջնջման գործընթացում, նրանք, այդուհանդերձ, մատնանշելով վիլայէթի ամբողջ տարածքում կոտորածների, ավերածութիւնների եւ կողոպուտների միաժամանակ սանձագերծուելու փաստը, յանգում են այն հետեւութեան, թէ խօսքն, անտարակոյս, վերաբերում է վաղօրօք կազմակերպուած եւ մշակուած ծրագրի հիման վրայ իրականացուած իրադարձութեան⁴³:

Հայկական կոտորածների հրահրիչներին հայ հոգեւոր առաջնորդներն անուանում են «երկրի եւ ազգի» թշնամիներ, որոնք գրգռել են մահմեդական բնակչութեանը եւ կեղծ լուրերի միջոցով նրա մօտ առաջ բերել հակահայ տրամադրութիւններ⁴⁴: Նրանց խիստ քննադատութեան թիրախում մշտապէս գտնւում է Ջեւադ բէյը, որը որեւէ միջոց չի ձեռնարկել կարգ ու կանոնը պահպանելու համար: Ըստ նրանց՝ հակահայ ասէկոսէների ստալոգութեանը քաջատեղեակ Ջեւադը՝ 1909 Ապրիլի 13ին տեղի ունեցած մահմեդականների հաւաքներից մէկի ընթացքում ոչինչ չի ձեռնարկել դրանք հերքելու համար եւ նրա ականյայտ անտարբե-

րութիւնը մեծապէս օժանդակել է կոտորածների սանձազերծմանն՝ ամբոխի կողմից⁴⁵ :

Հայ հոգեւոր գործիչների կարծիքով կոտորածների կանխամտածուածութեան մասին է վկայում նաեւ այն փաստը, որ թէ՛ Աղանայում եւ թէ՛ յարակից տարածաշրջաններում Ջեւաղն անմիջապէս ընդառաջել է մահմեդականների՝ իրենց զէնք տրամադրելու պահանջին: Ինչ վերաբերում է զօրքերի՝ կոտորածների երկրորդ փուլին ունեցած մասնակցութեանը, ապա նրանք շեշտում են, մասնաւորապէս Ռեմզի փաշայի չարագուշակ դերը: Նրա կարգադրութեամբ գինուորները յարձակուել են հայերի վրայ, մեծաքանակ զոհերի պատճառ դարձել, «փրականացրել սարսափելի ատերածութիւններ», հրկիզել եկեղեցիներ ու հայերի պատկանող տներ⁴⁶ :

Ի վերջոյ, Ջեւաղին եւ Ռեմզիին նրանք համարում են ոչ միայն Աղանայում, այլեւ ամբողջ վիլայէթում «յանցագործ շարժման» գլխաւոր պատասխանատուներ, որոնց տարբեր վայրեր առաքած հեռագրերը նպաստել են կիլիկիահայութեան բնաջնջման գործընթացի ծաւալմանը: Հայկական կոտորածների վերսկսումը հայ հոգեւոր առաջնորդները պայմանաւորում են նրանց գործունէութեամբ, ինչը վկայում է գործողութիւնների կանխամտածուածութեան եւ նախապատրաստուած լինելու, այլ ոչ թէ տեղական իշխանութիւնների՝ դրանք կանխելու հարցում անզօրութեան մասին⁴⁷ :

Ինչպէս տեսնում ենք, 1909ի Հայոց Ցեղասպանութեան հերթական փուլի հայազգի ժամանակակիցները կոտորածների կազմակերպման պատասխանատուութիւնը, ըստ էութեան, բարդում են գլխաւորապէս կոստանդնուպոլսում իշխանութեան եկած սուլթանական վարչակարգի եւ տեղական Օսմանեան պաշտօնեաների վրայ, երիտթուրքերին ամբողջութեամբ զերծ պահելով փոքր-իսկ պատասխանատուութիւնից: Ուստի՝ կարելի է կարծել, որ նոյնիսկ կիլիկիահայութեան հոգեւոր առաջնորդները, ինչպէս եւ կիլիկիայում բնակուող նրանց հայրենակիցները, ըստ էութեան, չեն կողմնորոշուել Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցող բարդ քաղաքական տեղաշարժերի էութեան մէջ, 1908ի յեղափոխութեան հետեւանքով իշխանութեան եկած՝ ազգամիջեան փոխարարներութիւնների ասպարէզում երիտթուրքերի վարած երկդիմի քաղաքականութեան ոլորտում, չեն ունեցել դեռեւս ամբողջական պատկերացումներ նրանց որդեգրած՝ կայսրութեան տարածքում բնակուող ժողովուրդների բռնի օսմանացման քաղաքականութեան շուրջ եւ գրտնուել են խորին մոլորութեան մէջ՝ անհիմն յոյսեր կապելով սահմանադ-

րութեամբ հռչակուած սկզբունքների կենսագործման հետ: Հետեւաբար, միանգամայն օրինաչափ է, որ նրանք իրրեւ կոտորածների իրական պատասխանատուների պարբերաբար ներկայացրել են ոչ միայն սուլթանական վարչակարգի կողմնակիցներին, այլեւ մահմեդական մի խումբ մուսուլմանների, որոնք դժգոհ 1908ին երկրում տեղի ունեցած յեղաշրջումից, ջանացել են սահմանադրական վարչակարգը տապալելու նպատակով բնակչութեան մէջ տարածայնութիւններ սերմանել, յայտարարելով, թէ սահմանադրութիւնն անհամատեղելի է իսլամական կրօնքի սկզբունքների հետ⁴⁸:

Պարբերաբար շեշտելով Յեղասպանութեան իրականացման հարցում կանխամտածուածութեան հանգամանքը, ժամանակի հայ հոգեւոր գործիչներն, այդուհանդերձ, անկեղծ հաւատով լի երիտթուրքերի խոստումների հանդէպ, նրանց սխալմամբ համարել են հայ ժողովրդի նկատմամբ բարեացակամօրէն տրամադրուած քաղաքական ոյժ եւ փոքր-իսկ կասկած չեն տածել, որ նրանք կարող էին նոյնիսկ կիլիկիահայութեան կոտորածների մեղսակիցը լինել:

Միաժամանակ, սակայն, նրանցից ոմանք գիտակցել են իրենց իսկ անգորութիւնը՝ հայկական կոտորածների իրական պատճառներում ամբողջութեամբ կողմնորոշուելու հարցում: Այս առումով, յատկանշական է Աղանայի հոգեւոր առաջնորդների՝ 1909 Նոյեմբերին Օսմանեան պատգամաւորներին յղած գրութիւնը, ուր մասնաւորապէս նշուած է. «Այս իրադարձութիւնների իրական պատճառը մեզ համար մնում է անթափանցելի առեղծուած»⁴⁹:

Ըստ այս հաւաստման՝ հարկ է չանտեսել եւս մէկ հանգամանք: Չի բացառուում, որ երիտթուրք պարագլուխներին յղած փաստաթղթերում հայ հոգեւոր առաջնորդները կիլիկիահայութեան բնաջնջման փորձի պատասխանատուութիւնը համիդեան վարչակարգի վրայ բարդել են գուցէ գիտակցաբար՝ իշխանութեան եկած քաղաքական նոր ուժերի հակահայ տրամադրուածութիւնն աւելի չբորբոքելու մտադրութեամբ եւ ծածուկ յոյսեր են տածել, որ երիտթուրքերը կը վերանայեն հայ ժողովրդի հանդէպ նախկին վարչակարգի որդեգրած քաղաքականութիւնը⁵⁰:

ԹՈՒՐԳ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐԻ ՈՒ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի տարբերութիւն Հայոց Յեղասպանութեան այս կամ այն փուլի պատմութիւնը լուսարանող փաստաթղթերի հրատարակութիւնների, Բրեզոլի ժողովածուին բնորոշ է մի առանձնաչատկութիւն՝ դրանում

ամփոփուած են տարածաշրջանի թուրք բարձրաստիճան պաշտօնեաների՝ Ադանայի կոտորածների առնչութեամբ որդեգրած դիրքորոշումն ու առաջադրած մեկնաբանութիւններն արտացոլող վաւերագրեր: Առաւել կարեւոր են Ջեւադի՝ Ներքին Գործերի նախարարութեանը յղած գրութիւնները, որոնցում կեղծելով փաստերը, նա պարբերաբար յիշատակում է 1909 Ապրիլի 1ին Ադանայում բնակուող մահմեդականների եւ քրիստոնեաների միջեւ արձանագրուած «յուզումներ»ի մասին, որոնք մարել են միայն իր ենթակայութեան տակ եղած զօրքերի միջամտութեան շնորհիւ⁵¹:

Առանց մեկնաբանելու, թէ ինչ նկատի ունի «յուզումներ» յեղյեղուկ արտայայտութեան տակ եւ դերադասելով ձեռնպահ մնալ դրանց իրական պատճառների բացայայտման մէջ թափանցելուց, Ջեւադը «յուզումներ»ի պատասխանատու է համարում մի քանի հայազգի Ֆիտայիների, չմոռանալով սակայն ընդգծել, որ այս հարցի շուրջ իր տեղեկութիւններն իրր ստացել է արժանահաւատ սկզբնաղբիւրներից⁵²: Եւրոպացի ժամանակակիցներին, ինչպէս նաեւ ապագայ սերունդներին ապակողմնորոշելու մտադրութեամբ՝ նա կառավարութեանը յղած ձեպագրերում հայկական կոտորածների փաստը քողարկելուց զատ դիմում է հերթական բացայայտ կեղծիքի, նշելով, թէ իրր Ադանայում պաշտպանութեան տակ են գտնուել ոչ միայն օսմանահպատակների թաղամասերը, այլեւ եւրոպացիներին պատկանող հաստատութիւնները⁵³: Իրականում, եւրոպացի միսիոնէրներին պատկանող հաստատութիւնների գերակշռող մասն Ադանայում աւերուել է եւ հրկիզուել⁵⁴:

Դեռեւս կոտորածների առաջին օրերին իրավիճակը կարգաւորելու միակ հնարաւոր միջոցը Ջեւադը համարում է բացառապէս զինուած ուժերի միջամտութիւնը: Թէ՛ իրեն գովաբանելու եւ թէ՛ հայերի նկատմամբ գործադրուած վայրագութիւններն արդարացնելու նպատակով, նա բազմիցս տեղեկացնում է հարեւան տարածաշրջաններից թուրքական զօրքերն Ադանա տեղափոխելու համար ձեռնարկած իր միջոցառումների մասին, ինչպէս նաեւ մատնանշում այն վայրերը, որտեղից հարկ է, որ նոր զինուած ուժեր փոխադրուեն Ադանա կամ Մերսին: Այս հարցում եւս՝ հաւատարիմ եւրոպական հանրութեանն ապակողմնորոշելու իր մարտավարութեանը եւ քողարկելով զօրքերն Ադանա փոխադրելու իրական նպատակը, որն էր հայկական կոտորածների երկրորդ փուլի իրականացումը, Ջեւադն իր ձեռնարկած գործողութիւնները պատճառաբանում է Մերսինում հաւատարմագրուած օտարերկրեայ հիւպատոսներին պաշտպանելու անհրաժեշտութեամբ⁵⁵:

Ի դէպ, Ջեւադից բացի կիլիկեան կոտորածների ընթացքում գորքերի դերին մեծ նշանակութիւն են յատկացնում նաեւ Օսմանեան այլ պաշտօնեաներ: Ջերէլ Բերեքէթի մութասարիֆ Ասաֆ բէյը եւս քաջ գիտակցելով զինուորների օժանդակութեան անհրաժեշտութիւնը հայերին բնաջնջելու գործընթացում, Ներքին գործերի նախարարութեանն առաջարկում է Բաղէ⁵⁰ ուղարկել Իսլահիէում եւ Օսմանիէում տեղակայուած գորքերը՝ մահմեդական բնակչութեանը պաշտպանելու պատրուակով: Հիմնաւորելու համար գորքերի ներկայութեան անհրաժեշտութիւնն, Ասաֆ բէյը նշում է Ապրիլի 3ին Դէօրթ Եոլում 400 հայի ձեռնարկած միջոցառումների մասին, որոնք կտրել են ծառերը, կառուցել բարիկաղներ, չընդունելով, սակայն, դրանց ինքնապաշտպանական բնոյթը: Դէօրթ Եոլ գորքեր ուղարկելու խնդրանքով նա դիմել է նաեւ Ներքին Գործերի նախարարութեանը, յիշատակելով, որ քրիստոնեաների թիւն այնտեղ գերազանցում է հինգ հազարը, իսկ տեղի հայերին միաժամանակ ներկայացրել է իրրեւ նախայարձակ կողմի, որն ի տարրերութիւն ընդամէնը մահակներ ունեցող մահմեդականների, զինուած է եղել հրազէնով եւ նոյնիսկ հրակոծել է բնակչութեանը⁵⁸: Այլ կերպ ասած՝ նա, փաստօրէն, թուարկում է հայերի ձեռնարկած ինքնապաշտպանական մարտերին առնչուող մանրամասներ, չջանկանալով սակայն, դրանց շուրջ առաջադրել անկողմնակալ մեկնարանութիւններ: Նրա թղթակցութիւնների ուշիմ ընթերցումն, այդուհանդերձ, յանգեցնում է միայն միակ հնարաւոր եւ նրա դիրքորոշմանը հակասող հետեւութեան, որը հաւաստում է հայերի պատրաստութիւնների ինքնապաշտպանական բնոյթը:

Խոզանի մութասարիֆ Հասանը եւս անուղղակիօրէն վկայում է հայերի ինքնապաշտպանական մարտերի մասին: Նա, սակայն, բնորոշում է դրանք իրրեւ ակնառու փաստ, որը «միայն յաւելել է մահմեդական բնակչութեան զրգոտածութիւնը»: Ըստ այդմ՝ նա եւս իրավիճակը կարգաւորելու, հայերի «ըմբոստութիւնը» ճնշելու պատրուակի տակ՝ պահանջում է գորքերի առնուազն մէկ գումարտակ⁵⁹:

Ի տարրերութիւն Ջեւադի՝ նրան փոխարինած Ադանայի նոր կուսակալ Մուսթաֆա Ջիհնին ընդունում է՝ վարչական տեսակէտից Հայէպի վիլայէթին ենթակայ Կերէք-Պան գիւղում հայկական կոտորածների իրողութիւնը⁶⁰: Սակայն կեղծելով Կիլիկիայում հայերի գոհերի թուաքանակը, որը սահմանում է 10000, զոհուած հայերի՝ 30000ի հասնող թիւը համարում է զրպարտութիւն եւ նշում, որ այն հարկ է հերքել⁶¹:

Ինչպէս տեսնում ենք, թուրք բարձրաստիճան պաշտօնեաներն Ադանայի տարածաշրջան Օսմանեան գօրքեր հրաւիրելու հանգամանքը փորձում են հիմնաւորել մահուան դատապարտուած հայերի կարծեցեալ ապստամբական գործողութիւնները սանձահարելու մտադրութեամբ: Նրանց գրագրութիւններն իրականում անուղղակիօրէն հաւաստում են կիլիկեան կոտորածների ընթացքում տարրեր վայրերում հայերի ինքնապաշտպանութեան փաստը, ինչը, սակայն, ներկայացուում է իրրեւ մահմեդականների համար սպառնալիք ներկայացնող գործողութիւններ: Իրականութիւնը խեղաթիւրելու նման մօտեցումը պատահական չէ, քանզի 1909ի կոտորածների երկրորդ փուլի ընթացքում, գօրքերը, յիրաւի, ունեցել են նշանակալից դեր, ուստի՝ Օսմանեան պաշտօնեաների առջեւ ծառայել է նրանց ներկայութիւնն Ադանայում եւ յարակից վայրերում արդարացնելու անհրաժեշտութիւնը:

Հայերի ինքնապաշտպանական մարտերին առնչուող հարցն անկողմնակալ դիրքերից քննարկել են տարրեր հայ հեղինակներ, որոնք յաւուր պատշաճի արժեւորել են, մասնաւորապէս ինքնապաշտպանութեան կազմակերպիչներից մէկի՝ Ջին Թորոսի գործունէութիւնը Կարս Փագարում եւ Չորք Մարգպանում: Նա փրկել է 6000 մարդու կեանք⁶²: «Շնորհիւ Ջին Թորոսի քաջութեան եւ խելամտութեան Կարս Փագարում եւ դրա շրջակայքում հարիւրաւոր մարդիկ պահպանում են իրենց գոյութիւնը», - գրում է հեղինակներից մէկը⁶³: Հայերի կարծեցեալ մեղսակցութեան առիթով փաստաթղթերից մէկում ոչ առանց հեզնանքի նշուում է, որ Չորք Մարգպանում հայերին մեղաւոր են համարում, քանզի «նրանք կենդանի են մնացել՝ զենքով պաշտպանելով իրենց ընտանիքների կեանքն ու պատիւը»⁶⁴:

Դէօրթ Եոլի, Փայասի եւ շրջակայքի հայ քահանայ Սահակը՝ հայոց պատրիարքարանին Ալեքսանդրէտից յղած՝ Մայիսի 10ի թուակիր նամակում հաստատելով Ապրիլին տեղի ունեցած կոտորածի փաստը, խոստովանում է, որ հայերը «միշտ ծառայել են կառավարութեանը եւ հայրենիքին»՝ երբեւէ որեւէ այլ նպատակ չհետապնդելով: Հայերի գործած միակ մեղքը նա համարում է յանուն գոյատեւման նրանց պայքարը⁶⁵:

Այս վկայութիւնները հիմնաւորապէս հերքում են թուրք պաշտօնեաների յերիւրանքները հայերի անհնազանդ, նախայարձակ լինելու մասին, ինչն ըստ առաջին տպաւորութեան՝ նրանց հարկադրել է դիմելու գօրքերի օժանդակութեանը:

Ժողովածուում հրատարակուած որոշ փաստաթղթեր՝ յղուած գլխաւորապէս Հայոց Պատրիարքարանին, բացայայտում են կիլիկիայի

մերձակայ տարածաշրջաններում բնակուող հայ ականատեսների մօտեցումները, որոնք էականորեն չեն զանազանում կիրիկեան հայազգի գործիչների դիրքորոշումից: Դրանցում եւս փաստում է, մասնաւորապէս Օսմանեան տեղական պաշտօնեաների ղեկավար դերը հայկական կոտորածներում: Հալէպից Ապրիլի 19ին պատրիարքարանին յղուած ճեպագրում ողբերգութիւնը պատճառարանում է միայն Աղանայի ղեկավարների անվճռականութեամբ: Տարածաշրջանում վերջին կոտորածների պատասխանատու ճանաչում է տեղի ժանդարմների ղեկավար Սերհան աղան, որը «գլխաւորելով զինուած հրոսակախումբը՝ անգթաբար կոտորում էր եւ կողոպտում»⁶⁶: Ալեքսանդրէտում բնակուող հայերը բացայայտում են Ասաֆ բէյի չարագոյժ դերը Ջերէլ Բերեքէթում հայերի բնաջնջման գործընթացում: Նա գինել էր 30000 յելուզակի, որից յետոյ նրանք յարձակուել են գիւղերի եւ Այաս քաղաքի վրայ, ոչնչացրել բնակիչների մեծամասնութեանը⁶⁷:

Որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում ժողովածուում ամփոփուած՝ պաշտօնատար անձանց եւ կոտորածների հետաքննութիւնը վարած տարրեր յանձնաժողովների գեկուցագրերը, որոնք արտացոլում են կոտորածների իրողութիւնը հաւաստող՝ յանձնաժողովների անդամների կարծիքները եւ հերքում՝ Աղանայի թուրք ղեկավար գործիչների խեղաթիւրումները: Թուրքական պաշտօնական դիրքորոշման մասին պարզորոշ վկայում է, մասնաւորապէս Ջեւադ բէյի՝ Մայիսի 12ի թուակիր՝ Բարձր Դռանը յղած գեկուցագիրը, ուր Աղանայի նախկին կուսակալը «խռովութիւններ»ի պատասխանատու է ճանաչում միայն հայերին⁶⁸: Կեղծելով փաստերը նա նրանց ներկայացնում է իրրել նախայարձակի, որոնք սպանել են թուրքերին եւ Աղանայում անկարգութիւնների հրահրման պատճառ դարձել: Չբաւարարուելով, սակայն, նման յայտարարութիւններով, Ջեւադն այս գեկուցագրում ջանում է հիմնաւորել հայերի՝ Օսմանեան պետութեան դէմ նիւթած կարծեցեալ դաւադրութեան վարկածը եւ նրանց վրայ է բարդում շինծու մեղադրանքներ, ինչպիսիք են խուզարկութիւնների հետեւանքով նրանց տներում պայթուցիկ նիւթերի, ռումբերի, նոյնիսկ թնդանօթների յայտնարերումը:

Ի տարրերութիւն նախորդ գրութիւնների՝ այս փաստաթղթում Ջեւադն, ի դէպ, առաջին անգամ օգտագործում է «կոտորածներ» բառը, ինչն ամէնեւին պատահականութեան արդիւնք չէ: Կոտորածների պատճառները, սակայն, նա մեկնաբանում է այն «անիրազեկութեամբ», որում գտնուում էին մահամեղականներն ու քրիստոնեաները (ինչն, ըստ

նրա՝ պայմանաւորուած է եղել բռնակալական դարաշրջանով), ինչպէս նաեւ տարրեր ժողովուրդների՝ միեւնոյն տարածաշրջանում համախմբման ցանկութեան բացակայութեամբ, համակեցութեան անբաւարար ձգտումով⁶⁹։ Ակնյայտ է, որ սուլթանական վարչակարգի տապալումից յետոյ, Ջեւադն ընդունում է հայկական կոտորածների փաստը, սակայն դրանց պատասխանատուութիւնը բարդում է միայն այդ վարչակարգի վրայ, նպատակ ունենալով վարկարեկումից ու մեղադրանքից զերծ պահել իշխանութեան եկած քաղաքական նոր ուժերին։ Միաժամանակ նա փորձում է հիմնաւորել երիտթուրքերի առաջադրած գանազան սին եւ վտանգաւոր կարգախօսների (մասնաւորապէս օսմանացման քաղաքականութեանն առնչուող) հնարաւոր արդիւնաւէտութիւնը Օսմանեան կայսրութիւնում ազգային հարցի կարգաւորման խնդրում։

Կիլիկիահայութեան կոտորածների նկատմամբ թուրքական պաշտօնական դիրքորոշումը բացայայտում է ժողովածուում գետեղուած փաստաթղթերից մէկում՝ 1909 Յուլիսին Ադանայի ռազմական գատարանին ներկայացուած գեկուցագրում։ Վաւերագրի հեղինակներն իրադարձութեան պատասխանատուութիւնն ամբողջութեամբ բարդում են հայերի վրայ, որոնք «ազատութեան հոչակում»ից, այն է՝ 1908ին 1876ի Օսմանեան սահմանադրութեան վերահաստատումից յետոյ զինուել են, իսկ հայկական կուսակցութիւնները նրանց մօտ արթնացրել են «ինքնավարութեան գաղափարը»⁷⁰։ Միաժամանակ իբրեւ Ադանայի «ցաւալի իրադարձութիւններ»ի պատճառներից մէկը՝ մատնանշուած է Օսմանեան իշխանութիւնների թողտուութիւնը, «արտասովոր եւ անցերեւի թուլութիւն»ը։ Թուրքերի եւ հայերի միջեւ ստեղծուած գերյարուած իրադրութեան պայմաններում ձեռնպահ մնալով հայկական կոտորածների սանձագերծման պատասխանատուութիւնը բացայայտօրէն տեղական իշխանութիւնների վրայ բարդելուց՝ փաստաթղթի հեղինակներն, այդուհանդերձ, ընդունում են դրանց հաւաստիութիւնը, մասնաւորապէս նշելով, որ մահմեդական բնակչութիւնն իրականացրել է վայրագութիւններ՝ «կարծելով, թէ կառավարութիւնը պաշտօնապէս թոյլատրել է հայերի կոտորածները»⁷¹։ Ինչպէս տեսնում ենք, չնայած իրադարձութեան իրական պատճառների շրջանցմանը, պետական քաղաքականութեան մակարդակով Հայոց Յեղասպանութեան հերթական փուլի իրականացման ժխտմանը եւ հայերին՝ «յուզումներ»ի գլխաւոր մեղաւորներ ներկայացնելու միտումին, փաստաթղթի հեղինակներն, այնուամենայնիւ, ընդունում են իշխանութիւնների դրսեւորած անտարրերութիւ-

նը, ինչը յանգեցրել է, ըստ նրանց՝ անկառավարելի կացութեան եւ իր-
րեւ դրա հետեւանք՝ հայկական կոտորածները:

Հարկ է մեկնաբանել, որ երիտթուրքերի իշխանութեան գալուց յե-
տոյ կազմուած այս վաւերագրում, ակնարկելով Օսմանեան իշխանու-
թիւնների անվճռականութեանը, հեղինակները միաժամանակ գիտակ-
ցարար չեն յատկեցնում, թէ ո՞ր վարչակարգն է կրում նման դիրքո-
րոշման պատասխանատուութիւնը եւ զրանով իսկ նրբանկատօրէն քօ-
ղարկում երիտթուրքերի՝ կոտորածներին ունեցած մեղսակցութիւնը:

Օսմանեան ղեկավարների դիրքորոշման մասին է վկայում նաեւ
Մեծ Վեզիր Հիւմիի՝ նահանգային իշխանութիւններին յղած շրջաբերա-
կանը, որով կիլիկեան կոտորածների մեղաւոր ճանաչում են պետական
որոշ պաշտօնեաներ, մասնաւորապէս պահպանած լուսթեան համար:
Նրանց լուսթիւնը ոչ միայն բարդացրել է իրավիճակը, այլեւ խաժամու-
ժին առիթ է տուել անյարգայից վերաբերուելու նոյնիսկ կառավարու-
թեանը: Կիլիկիայում «ցաւալի իրադարձութիւններ»ի բռնկման միակ
պատճառը Հիւմիին համարում է պաշտօնեաների դրսեւորած անգործու-
թիւնը, որոնք իրենց պարտքը «նուիրուածութեամբ եւ ինքնագոհու-
թեամբ» չեն կատարել ⁷²:

Մեծ Վեզիրն ակնյայտօրէն քօղարկում է Օսմանեան կառավարու-
թեան քաղաքականութեան հակահայ բնոյթը, միաժամանակ սակայն,
ընդունում է հայերի նուիրուածութիւնն Օսմանեան պետութեանը ⁷³:
Դրանով իսկ նա ակամայից հակահարուած է տալիս Օսմանեան զանա-
գան ղեկավարների առաջադրած՝ հակապատմական եւ անճիշդ՝ հայկա-
կան կողմի նախայարձակ լինելուն առնչուող տեսակէտին:

Փոխարէնը՝ Օսմանեան իշխանութիւնների դիրքորոշման դատա-
պարտման մասին են վկայում Ադանայում հետաքննութիւնը վարած
կառավարական Հետաքննիչ Յանձնաժողովի պաշտօնական հաղորդագ-
րութիւնները, որոնց ներքոյ ստորագրել են Օսմանեան խորհրդարանի
եւ կառավարութեան կողմից կոտորածների հետաքննութիւնը վարելու
համար Կիլիկիա ուղարկուած երկու պաշտօնեաներ՝ թուրք Ֆայիկ բէյը
եւ հայազգի իրաւարան Յարութիւն Մոստիչեանը ⁷⁴, ինչպէս նաեւ տե-
ղում նրանց աջակցած Մերսինի մութասարիֆ Էսսադ Ռէուֆ բէյը:
Նրանց քննադատութիւնն ուղղուած է յատկապէս իշխանութիւնների՝
կեղծ լուրեր տարածողներին պատժելու հարցում հանդէս բերած չկա-
մութեան, ինչպէս նաեւ Ջեւադի օգտագործած «յուզումներ» արտայայ-
տութեան դէմ, որը ենթադրել է տուել, թե իբր հայերն ապստամբել են:

Այս ամէնի հետեւանքով, հայերը կոտորուել են, նրանց բնակավայրերը հրկիզուել են, իսկ ունեցուածքը կողոպտուել է⁷⁶։

Կոտորածները կազմակերպելու պատճառաբանութեամբ խիստ քննադատութեան է ենթարկւում Զեւադը, որը «զլացել է դիմելու որեւէ միջոցի յուզումներին խոչընդոտելու համար» եւ «չի ձեռնարկել որեւէ գործնական քայլ կանխարգելելու համար աղետալի ծրագրերի իրականացումը»⁷⁶։ Հիմնաւորապէս բացայայտուած է Զեւադի ղեկավար դերը կիլիկիահայութեան կոտորածների երկրորդ փուլի իրականացման ընթացքում։ Պարզաբանուած է, մասնաւորապէս այն հարցը, որ լարուած իրավիճակը լիցքաթափելու նպատակով, Ապրիլի 12ին Ադանա ժամանած զօրքերին նա խարել է՝ հայերին նրանց ներկայացնելով իրրեւ նախաշարձակ կողմի եւ դրանով իսկ հրահրել կոտորածների երկրորդ փուլը՝ շատ աւելի սարսափելի, քան առաջինը⁷⁷։ Միաժամանակ յղելով անսքօղ փաստեր, հաղորդագրութեան հեղինակները եզրակացնում են, որ եթէ տեղական պաշտօնեաները ցանկութիւն դրսեւորէին, կարող էին կանխել «յուզումները»⁷⁸։

Ընդհանուր առմամբ, յանձնաժողովի անդամները հիմնաւորապէս բացայայտում են հայկական կոտորածներում ներգրաւուած՝ Օսմանեան տեղական պաշտօնեաների պատասխանատուութիւնը։ Իրրեւ Զերէլ Բերեքէթ սանջակում իրականացուած կոտորածների, հրկիզումների եւ կողոպուտների գլխաւոր պատասխանատուի՝ նշուած է մութասարիֆ Ասաֆ Բէյի անունը, որն իր հեռագրերով հրահրել է «յուզումները» եւ գինել յելուզակներին⁷⁹։ Թէպէտ փաստաթղթում ամբողջութեամբ չի յստակեցւում կոտորածների իրական կազմակերպիչների ինքնութիւնը, այդուհանդերձ, ակնարկներ կան սոսկ «աւտելի բռնակալութեան» կողմնակից մահմեդականների մասին։ Առաւել պարզորոշ այս խնդիրը լուսարանել է Մոստիշեանը, որը գեկուցագիրը ստորագրելուց առաջ նշել է, թէ վկայակոչուած գործողութիւնների մեծամասնութիւնն «իրականացրել են յետադիմականները»⁸⁰։ Ըստ այս հաւաստումներին եւս՝ իրադարձութեան պատասխանատու ճանաչուած է միայն սուլթանական վարչակարգը։ Դա վկայում է, հաւանաբար, ըստ վերից տրուած հրահանգի՝ յանձնաժողովի անդամների կանխակալ մօտեցման մասին, ինչը յանգեցրել է հարցի ընդգծուած միակողմանի մեկնաբանութեանը եւ հետապնդել երիտթուրքերին կոտորածներին անմասնակից ներկայացնելու նպատակ։

Կիլիկեան կոտորածների բացայայտմանը մեծապէս նպաստել են Օսմանեան խորհրդարանի կողմից՝ տեղում հետաքննութիւն անցկացնելու

նպատակով թուրք պատգամաւոր Եուսուֆ Քեմալի հետ կիլիկիա գործուղողւած հայազգի երիտթուրք պատգամաւոր Յակոբ Պապիկեանի⁸¹ զեկուցագրից՝ ժողովածուում զետեղուած որոշ հատուածներ⁸²։ Պապիկեանը հիմնուելով հետաքննութեան արդիւնքների վրայ, հաւաստում է Ադանայում հայկական թաղամասերի վրայ թուրքերի նախաշարժակ լինելու, իսկ հայերի՝ հարկադրարար ինքնապաշտպանութեան դիմելու իրողութիւնը, ինչի հետեւանքով սպանուել են որոշ գրոհայիններ։ Դրանով իսկ Պապիկեանը բացառում է հայերի ապստամբութեան վարկածի հաւանականութիւնը, իսկ փոխարէնը պնդում, որ խօսքը կարող է վերաբերուել միայն քրիստոնեաներին անգթօրէն կոտորելու նպատակ հետապնդող՝ «կանխամտածուած, զինուած» գործողութեան⁸³։

Կոտորածների երկրորդ փուլի կապակցութեամբ եւս նա ապացուցում է, որ հայերը որեւէ առիթ չեն տուել բռնութիւնների գործադրման համար, քանզի չեն ունեցել ո՛չ զէնք ու զինամթերք, ո՛չ ռումբեր, չնայած այդ կապակցութեամբ Զեւադի տարածած կեղծ լուրերին։ Ի վերջոյ, Պապիկեանը եզրակացնում է, որ կոտորածը հետապնդել է հայերի եւ քրիստոնեաների բնաջնջման նպատակ⁸⁴։ Ինչպէս տեսնում ենք, Պապիկեանը հիմնաւորապէս հերքում է հայերի ապստամբութեան՝ իրականութեան հետ հեռաւոր առնչութիւն իսկ չունեցող վարկածը, ինչն իրադարձութեան անկողմնակալ մեկնարանութեան հարցում նրա մեծ ներդրումն է։

Ժողովածուի հրատարակիչը սակայն, դուրս է թողել Պապիկեանի զեկուցագրի վերջաբանի ամենակարեւոր հատուածը, որտեղ նա հաւաստում է երիտթուրքերի մեղսակցութիւնը կիլիկեան կոտորածներին. «Վերջացնելէ առաջ ստիպուած եմ ամենախորը ցաւով աւելացնելու, որ «Իթքիատ եւ Թերաքքը» կուսակցութեան անդամները Ատանայի վայրագ եղերերգութեան կազմակերպման եւ գործադրութեան մասնակցած են։ Այս իրողութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ, հիւպատոսներէ, ամերիկացի միսիոներներէ եւ լատին քահանաներէ»⁸⁵։

Փոխարէնը, Պապիկեանի զեկուցագրից Բրեզոլը զետեղել է այնպիսի հատուածներ, որոնցով հեղինակը բացառապէս է «յետադիմականներ» ին եւ շեշտում, որ հայերը դարձել են սուլթանական վարչակարգի կողմնակիցների գոհը⁸⁶։ Պատահական չէ, որ ժողովածուում ամփոփուած՝ կոտորածների երկրորդ փուլի առիթով Պապիկեանի դիտարկումներն առնչում են, մասնաւորապէս ժանդարմների՝ հայերին ցուցարե-

րած օգնութեան եւ ապաստան յատկացնելու փաստերին, գինուորների հակասահմանադրական եւ սուլթանամէտ բացականչութիւններին⁸⁷ :

Բրեզոլի նման դիրքորոշումը կարելի է, հաւանաբար, մասամբ մեկնարանել այն հանգամանքով, որ նա թերեւս յոյսեր է կապել կիլիկիահայերի իրավիճակի բարելաւման հարցում իշխանութեան եկած քաղաքական նոր՝ սահմանադրական ուժերի հետ եւ, հաւանաբար, չի ցանկացել նրանց աւելի գրգռել: Չի բացառուում նաեւ, որ երիտթուրքերի հանդէպ ակնկալիքներով լի հրատարակիչը գերադասել է սքողել կոտորածներին ունեցած նրանց վճռական դերը՝ գերլարուած իրավիճակը լիցքաթափելու մտադրութեամբ:

Ժողովածուն ընդգրկում է մեծ թուով փաստաթղթեր, որոնք աներկբայօրէն վկայում են որոշ թուրք բարձրաստիճան պաշտօնեաների՝ հայերին ցուցարբերած օգնութեան մասին: Հայագգի Վ. Ուզունեանը յիշատակում է Քեսարի «յիւրալի սահմանադրական» մութասարիֆ Մեհմէդ Ալի բէյի մասին, որի ջանքերի շնորհիւ փրկուել է 7000 հայի կեանք⁸⁸: Ըստ վաւերագրերի՝ հայերին օգնութեան ձեռք է մեկնել նաեւ Վահկայի կառավարիչ Նուրի բէյը, որն Աղանայի կոտորածների լուրն ստանալուն եւեթ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել դրանք իր ենթակայութեան ներքոյ գտնուող տարածաշրջանում կանխելու համար⁸⁹: Թուրք բարձրաստիճան պաշտօնեաների թուում յիշատակում է նաեւ Մերսինի մութասարիֆ գնդապետ Սելէֆը, որը «եռանդազին ձեռով պաշտպանել է քրիստոնեաներին եւ չի թոյլատրել, որ քաղաքում ոճրագործութիւններ կատարուեն»⁹⁰: Վաւերագրերը փաստում են նաեւ այլ տարածաշրջանների (Օսմանիէ, Այնթար եւն.) վարչական ղեկավարների⁹¹, ինչպէս նաեւ սակաւաթիւ թուրք քաղաքացիների հայանպաստ դիրքորոշումը⁹²:

Ժողովածուում գետեղուած որոշ փաստաթղթեր վերաբերում են եւրոպացի դիւանագէտների՝ հայերին ցուցարբերած օգնութեանը: Դրանցից մէկում նշում է Քեսարում Ֆրանսիայի փոխհւպատոս Պոթոնի (Pothon) մասին, որի «ւարդասիրական գործողութիւնները ցանկացած գովեստից վեր են»⁹³: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ սոյն ժողովածուի հրատարակիչը չի հրատարակել եւրոպական տէրութիւնների՝ սոսկ դիտորդի դեր ստանձնած դիրքորոշումն արտացոլող փաստաթղթեր, որոնք, հաւանաբար նրան մատչելի չեն եղել:

Ամէն դէպքում, փաստաթղթերի սոյն ժողովածուի նշանակութիւնը մեծ է, քանզի այն միակ հրատարակութիւնն է, որը հնարաւորութիւն է ընձեռել ժամանակակիցներին, ինչպէս նաեւ յետագայ սերունդներին,

տարատեսակ սկզբնաղբիւրների համադրման միջոցով, պատկերացումներ կազմել ոչ միայն 1909ի կիլիկիայում եւ յարակից տարածաշրջաններում ծաւալուած հայկական կոտորածների, այլեւ հայազգի գործիչների եւ Օսմանեան ղեկավարների՝ իրադարձութեանը տուած մեկնարանութիւնների մասին: Ըստ այդմ՝ Բրեզոլի ժողովածուն առ այսօր պահպանում է իր գիտական եւ ճանաչողական նշանակութիւնը:

LES MASSACRES D'ADANA ET NOS MISSIONNAIRES. RÉCIT DE TÉMOINS

1909ի կիլիկիահայութեան բնաջնջման պատմութեանը նուիրուած փաստաթղթերի միակ ժողովածուից գատ⁹⁴ աղբիւրագիտական տեսակէտից որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ 1909ին Լիոնում անստորագիր լոյս ընծայուած *Les Massacres d'Adana et Nos Missionnaires. Récit de Témoins* գրքոյկը⁹⁵: Հեղինակը նախընտրել է իրադարձութիւնների ընթացքն ականատեսների վկայութիւններից բերուած ընդարձակ քաղուածքներով ներկայացնելու ուղին, որը նրա մօտեցման առանձնայատկութիւնն է եւ վկայում է շարադրանքի նկարագրական բնոյթի մասին: Ուստի՝ կարելի է հաւաստել, որ գրքոյկը ձեռք է բերում գլխաւորապէս աղբիւրագիտական նշանակութիւն: Ելնելով թէ՛ շարադրանքի ոգուց եւ թէ՛ վերջին էջում գետեղուած ծանուցագրից («Խնդրում է նուիրատուութիւնները հասցեագրել Հայաստանի առաքելութեան պատասխանատու՝ պ. արքա Պիեռ Մագոյերին») (Masoyer), կարելի է ենթադրել, որ հեղինակը Փրանսիացի միսիոնէր է, որը նիւթը շարադրել է Ադանայում գտնուած Փրանսիացի միսիոնէրների (հայր Բենուա, հայր Սարատիէ, հայր Տարէ եւ այլք) նամակների եւ այնտեղից Լիոն վերադարձած հոգեւորականների բանաւոր տեղեկութիւնների հիման վրայ, որոնք «բոլորն Ադանայի կոտորածների ականատեսներն են»⁹⁶: Միսիոնէրներից գատ՝ անանուն հեղինակը յղում է նաեւ Փրանսիացի եւ անգլիացի որոշ դիւանագէտների վկայութիւններ: Չնայած դրան, լինելով հոգեւոր գործիչ, հեղինակն իր տրամադրութեան տակ եղած սկզբնաղբիւրների ընձեռած հնարաւորութիւնների սահմաններում սահմանափակում է Ադանայում միսիոնէրական հաստատութիւնների հրկիզման ու աւերման նկարագրութեամբ եւ խոստովանում, որ չի հետապնդում կիլիկեան անցքերի համապարփակ պատկերը բացայայտելու նպատակ⁹⁷:

Նա մանրամասնորէն անդրադառնում է Ֆրանսիացի միսիոնէրների գործունէութեանը եւ ծանրանում այն օժանդակութեան վրայ, որը նրանք ցուցաբերել են իրենց պատկանող հաստատութիւններում պատասխարուած հայերին: Հեղինակը «հերոսական» է համարում Ֆրանսիացի միսիոնէր՝ եղբայր Անտուանի արարքն Ադանայում, որը վտանգելով իր կեանքը՝ փրկել է հրկիզուող հայկական եկեղեցում ապաստանած 1500 հայի կեանք: Շեշտում է նաեւ հայր Բենուայի դերը՝ միսիոնէրներին պատկանող քուէջներից մէկում հանգրուանած 800 հայի փրկութեան գործում⁹⁸: Նա դրուատանքի խօսքեր է ուղղում նաեւ Բէյրութում գտնուող Աէն ժոզէֆ Համալսարանի ղեկավար, հայր Կատտինի հասցէին, որը շտապ Ադանա է ուղարկել առաջին անհրաժեշտութեան իրեր եւ որի օժանդակութեամբ հիմնադրուել է նոր հիւանդանոց⁹⁹:

Հեղինակն իրադարձութիւններին գնահատականներ չի տալիս. կարելի է նոյնիսկ հաւաստել, որ նման նպատակ, հաւանաբար, նա չի հետապնդել: Այդուհանդերձ, նրա շարադրանքում երբեմն նկատուում են մեկնարանութեան կարիք ունեցող որոշ հպանցիկ դիտարկումներ:

Ամբողջութեամբ շրջանցելով կիլիկեան կոտորածների պատճառները, հեղինակը դրանք համեմատում է 1895ի ջարդերի հետ եւ իրաւամբ եզրակացնում, որ չլինելով նոյնքան լայնածաւալ, «վերջին կոտորածները բարբարոսութեան առումով դրանց ոչնչով չեն զիջել»¹⁰⁰: Դրա հետեւանքով, ըստ նրա՝ «մեծ եւ հարուստ քաղաքը ներկայացնում է սարսափելի տեսարան: Կարելի է ասել, որ խօսքը վերաբերում է Պոմպէյի ատերակներին, սակայն՝ այրուող փլատակների վրայ ծխացող ատերակների»¹⁰¹: Չոհերի քանակի շուրջ չունենալով լիարժէք տեղեկութիւններ՝ նա, այդուհանդերձ, յղելով գանազան վկայութիւններ, ցուցաբերում է իրատեսական մօտեցում, հաւաստում, որ Ադանայի վիլայէթում սպանուած հայերի թիւը հասել է 30000ի¹⁰²:

Կիլիկիահայութեան ողբերգութեան պատճառներին առնչուող հեղինակի սակաւաթիւ մեկնարանութիւնները խիստ թերի են, քանզի նա ամբողջութեամբ շրջանցում է կոտորածների իրական կազմակերպիչների բացայայտումը, նոյնիսկ չի ակնարկում ոչ միայն երիտթուրքերի ղեկավար դերը, այլեւ տեղում գտնուող Օսմանեան պաշտօնեաների եւ բանակի մասնակցութիւնը: Թերեւս լիարժէք պատկերացումներ չունենալով երիտթուրքերի եւ սուլթանական վարչակարգի միջեւ յանուն իշխանութեան ծաւալուած պայքարի մասին, նա շրջանցում է հայկական կոտորածներում ներգրաւուած քաղաքական տարրեր ուժերի վրայ բարդուող պատասխանատուութեան քննարկումը եւս:

Հեղինակը Կիլիկիայի հայկական կոտորածները գերադասում է մեկնարանել իրրեւ լոկ մահմեդականների եւ քրիստոնեաների միջեւ առկայ կրօնական հակամարտութեամբ պայմանաւորուած՝ քրիստոնէութեան դէմ ուղղուած իրադարձութիւն: Նրա որդեգրած նման անընդունելի դիրքորոշման պատճառները զանազան են: Նախ՝ հեղինակը չունենալով թերեւս բազմազան անհրաժեշտ սկզբնաղբիւրներ՝ հիմնուել է հիմնականում, ինչպէս վերը նշեցինք, Փրանսիացի հոգեւոր գործիչներից ստացուած վկայութիւնների վրայ: Վերջիններս, չնայած Ազանայում գտնուելու հանգամանքին, իրադարձութիւնն, այդուհանդերձ, ընկալել են խիստ սահմանափակ տեսանկիւնից եւ ելնելով իրենց աշխարհայեացքից՝ կոտորածների մեկնարանութեան հարցում ուշադրութիւնը բեւոռել միայն կրօնական առճակատման վրայ: Լինելով հոգեւոր գործիչ, հեղինակը եւս անկարող է եղել յաղթահարելու իր իսկ աշխարհայեացքի սահմանափակութիւնը եւ հարցը քննարկել լայն յետնախորքի վրայ: Ի վերջոյ, չլմբռնելով կոտորածների իրական պատճառները, նա յանգել է իրականութեանը համապատասխանող, այդուհանդերձ, խիստ մակերեսային եզրակացութեան եւ հաւաստել, որ «բազմաթիւ քրիստոնեացիներ կործանուել են՝ դառնալով իրենց հաւատքի զոհը: Կոտորածները, յիրաւի, ունեցել են խիստ ընդգծուած հակաքրիստոնեական բնոյթ»¹⁰³: Իր տեսակէտի հիմնաւորման համար, հեղինակը, ինչպէս եւ Հայոց Յեղասպանութիւնը լոկ դաւանանքների զանազանութեամբ պատճառարանած եւրոպացի շատ այլ ժամանակակիցներ¹⁰⁴, վկայակոչում է կրօնափոխութեանն առնչուող արժանահաւատ փաստեր, նոյնիսկ չգիտակցելով, որ համակողմանի եւ ընդգրկուն մօտեցման բացակայութեան պայմաններում, նման մեկնարանութիւնը հեռու է հարցի իրական պատճառների բացայայտումից. «Գրեթէ միշտ մարդասպաններն առաջարկում էին ընտրութիւն՝ հաւատափոխութեան եւ մահուան միջեւ»¹⁰⁵:

Այսպիսով, վկայակոչելով կրօնափոխութեանը վերաբերող, յիրաւի, հաւաստի առաջարկներ, հեղինակը միաժամանակ չըջանցում է պետական քաղաքականութեան մակարդակով Կիլիկիայում արձանագրուած կոտորածների կանխամտածուած բնոյթը: Այդուհանդերձ, չնայած այս փաստին, հարկ է ընդգծել գրքոյկի անուրանալի աղբիւրագիտական, եւ ըստ այդմ՝ ճանաչողական նշանակութիւնը, ինչն, անտարակոյս, նպաստել է կիլիկեան իրադարձութիւնների շուրջ՝ եւրոպացի ժամանակակիցների տեղեկատուութեան ընդլայնմանը:

ADOSSIDÈS, ARMÉNIENS ET JEUNES-TURCS. LES MASSACRES DE CILICIE

1909ին Կիլիկիայում տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան հերթական փուլին նուիրուած Փրանսիացի հեղինակների աշխատութիւնների թւում առաւել արժէքաւոր է Փրանսիացի լրագրող Ա. Ադոսիդէսի գիրքը¹⁰⁹, որի ազդեւրագիտական հենքը բազմազան է: Թէպէտ յղումներ չկան, հեղինակն, այդուհանդերձ, հիմնուած է գլխաւորապէս ամերիկացի, անգլիացի, Փրանսիացի դիւանագէտների եւ միտինէրների վկայութիւնների վրայ: Ադոսիդէսն իր բաւական ընդգրկուն տեղեկատուութեան շրջանակներում մանրամասնօրէն քննարկում է ոչ միայն Կիլիկիայում, այլեւ Հայէպի տարածաշրջանում տեղի ունեցած հայկական «սարսափելի» կոտորածների ընթացքը եւ վերլուծում դրանց պատճառները: Նրա բնորոշմամբ՝ «այն, ինչը Ստամբուլում անուանել են Ադանայի խոռվութիւններ, իրականում ամենահրեշտոր յանցափորձերից է, որն արձանագրել է հայկական նահատակութիւնը»¹⁰⁷:

Նշելով, որ ծագած շարժումն ուղղուած է եղել «աւտելի ազգութեան» դէմ, նա, այնուամենայնիւ, առանձնացնում է «մարդկային այլեւս ոչինչ չունեցող մարդկանց»¹⁰⁸, հայ տղամարդկանց հանդէպ դրսեւորած առանձնայատուկ դաժանութիւնը¹⁰⁹, միաժամանակ պարզաբանում, որ փոխարէնը՝ կանանց եւ երեխաներին նրանք կամ ստրկացնում էին, կամ կրօնափոխում¹¹⁰: «Ընդհանուր առմամբ, - եզրակացնում է նա, - Կիլիկիայի իրադարձութիւնների ընթացքում ապշեցնում են մի ամբողջ ժողովուրդ ոչնչացնելու համար որդեգրուած դաժանութիւնը եւ անհաւատալի լկտիութիւնը»¹¹¹:

Ըստ զանազան արժանահաւատ փաստերի համադրութեամբ կատարած հեղինակի հաշուարկների՝ զոհերի թիւը հասել է նուազագոյնը 20000ի¹¹²: Սակայն այս թուին, որը զիջում է զոհուած հայերի շուրջ 30000ի հասնող թուաքանակին¹¹³, նա իրաւամբ անհրաժեշտ է համարում յաւելիել նրանց, ովքեր «այդ դժոխքից» փրկուել են հաշմանդամ կամ անաշխատունակ դարձած, աւելի ուշ մահկանացուն կնքել են վէրքերից կամ սովից ու տարածուած համաճարակներից, ինչպէս նաեւ բռնութեամբ իսլամն ընդունած կանանց եւ երեխաներին, առեւանգուած երիտասարդ աղջիկներին¹¹⁴:

Ադոսիդէսն իրադարձութիւնների սակաւաթիւ ժամանակակիցներից է, որի ուշադրութիւնից չեն վրիպել նաեւ հայ ժողովրդի կրած նիւթական կորուստները, որոնց շարքում նա դասում է ոչ միայն «քանդուած օջախները», այլեւ ամայացուած դաշտերը, գողացուած գիւղա-

տնտեսական մեքենաները, անասունները, ապրանքները, շարժական գույքը¹¹⁵ : Չունենալով սակայն անհրաժեշտ սկզբնաղբիւրներ, նա բաւարարոււմ է սոսկ փաստի արձանագրմամբ :

Ինչ վերաբերում է կիլիկիահայութեան կոտորածների պատճառներին՝ հեղինակն իրաւամբ մատնանշում է ներքին նահանգներից հայերի հոսքը Կիլիկիա, տարածաշրջանի քրիստոնեաների բարեկեցիկ վիճակը, բնակչութեան նիւթական ապահովութիւնը : Չանտեսելով այս հանգամանքների նշանակութիւնը, որոնք մեծապէս նպաստել են 1909ին տարածաշրջանը կոտորածների թատերաբեմի վերածելուն, ջարդերի մեկնարանութեան խնդրում հեղինակն, այնուամենայնիւ, երբեմն տուրք է տալիս այնպիսի վարկածների, որոնք չեն համապատասխանում իրականութեանը : Դրանց թւում է, օրինակ, թուրքերի առաջադրած ստաջող այն փաստարկը, ըստ որի հայերի ներգաղթը Կիլիկիա իբր պայմանաւորուած է եղել հայկական ապստամբութեան նախապատրաստութեամբ : Իրականում, հաշուի առնելով Կիլիկիայի սոցիալ-տնտեսական անհամեմատ բարւօք վիճակը, որը հնարաւորութիւն էր ընձեռում դրամ վաստակելու, գարնան ամիսներին շուրջ 50000 հայ Օսմանեան կայսրութեան տարբեր տարածաշրջաններից տեղափոխոււմ էր Ադանա¹¹⁶ : Բացի դրանից, նա մեծ նշանակութիւն է տալիս թուրքերի մօտ արմատացած՝ քրիստոնեաների ունեցուածքի թալանի անյազուրդ կրքքին, որն, ի դէպ, անիրաւացիօրէն համարում է հայկական ցանկացած կոտորածի «միակ շարժառիթ»ը կամ Օսմանեան սահմանադրութեամբ՝ մահմեդականների եւ քրիստոնեաների իրաւունքների միջեւ հաւասարութեան հռչակման հետեւանքով առաջ եկած հերթական լարուածութեանը, որի ստեղծման հարցում մեծ դեր են ունեցել մահմեդական հոգեւորականները¹¹⁷ : Այս առիթով, նա իրաւամբ նշում է. «Կիլիկիայի հայերը շտապել են օգտուել այն իրաւունքներից, որոնք նոր վարչակարգը նրանց շնորհում էր տեսականօրէն»¹¹⁸ : Այդուհանդերձ, մեր համոզմամբ այս հանգամանքը կարելի է դասել միայն 1909ի կոտորածների դրդապատճառների, եւ ոչ թէ հիմնական նախադրեալների շարքում :

Ադոսիդէսն, այդուհանդերձ, բազմիցս քննադատում է Օսմանեան իշխանութիւնների գործելաձեւերից մէկը. նրանք, ինչպէս եւ նախորդ ժամանակաշրջանում, թէ՛ կիլիկիահայութեան բնաջնջմանը ձեռնամուխ լինելուց առաջ եւ թէ՛ կոտորածների ընթացքում, ջանք ու եռանդ չեն խնայել դրանց պատասխանատուութիւնը հայերի վրայ բարդելու համար : «Պնդում են, որ հայերը պատրաստում են զանգուածաբար ոչնչացնել բոլոր թուրքերին, կարճ ասած, հոգ է տարում յուզումնայից

իրավիճակը պահպանելու համար: Այսպիսին է ցանկացած կոտորածի դասական սկիզբը Հայաստանում», - գրում է նա¹¹⁹: Վկայակոչելով տարատեսակ փաստեր, նա հիմնովին բացայայտում է յատկապէս Ջեւադ րէյի՝ հայ եւ օտարերկրեայ ժամանակակիցներին ապակողմնորոշելու ուղղութեամբ գործադրած միջոցները: Ջեւադը շռայլում էր հայերի կեանքի ապահովութեանն առնչուող կեղծ հաւաստիացումներ, «ինչի գաղտնիքին, Արեւելքում տիրապետում են»¹²⁰: Լարուած իրավիճակը լիցքաթափելու նպատակ հետապնդող վերջինիս համանման դատարկ խոստումները դիմագերծելու նպատակով Ադոսիդէսը հրապարակում է Ապրիլի 14ին Բարձր Դռանը յղած՝ Ադանայում կոտորածների սկիզբն ազդարարող նրա հեռագիրը, որով հայերի վրայ բարդուում էր թուրքերին գրոհելու եւ նրանց կոտորելու մեղադրանք¹²¹: Շատ աւելի բացայայտիչ է Ադոսիդէսի վկայակոչած մէկ այլ փաստ, ըստ որի Ջեւադն Ապրիլի 16ին ադանայարնակ հայերին առաջարկել է՝ ընթացքի մեջ դրսնուող կոտորածների կապակցութեամբ ստորագրել իրենց իսկ կարծեցեալ պատասխանատուութիւնը հաւաստող մի փաստաթղթի ներքոյ, ինչից նրանք կտրականապէս հրաժարուել են¹²²:

Թուրքական իշխանութիւնների նման անճիշդ յայտարարութիւնների եւ նախաձեռնութիւնների հերքմանն անուղղակիօրէն մեծապէս նպաստում են նաեւ Ադոսիդէսի՝ Թուրքիայում տեղի ունեցած խմորումների հանդէպ հայերի վերաբերմունքին առնչուող մեկնարանութիւնները: Տարբեր առիթներով հեղինակն ապացուցում է, որ հայերն անջատողական միտումներ չեն ունեցել, իսկ սահմանագրութեան վերահաստատումից յետոյ խանդավառութեամբ են ընդունել «նոր դարաշրջանը, որի հետ կապել են ազատագրման իրենց յոյսերը»¹²³: Ակնարկելով հայերի յուսախարութիւնը, մասնաւորապէս «արդարութեան եւ իրատունքի վրայ հիմնուած խաղաղութիւն հաստատող կառավարութիւն» ձեւաւորելու հարցում, հեղինակն, այնուամենայնիւ, նրանց համարում է թուրքերից յետոյ Օսմանեան կայսրութեան պահպանութեան հարցում ամենանուիրուած ու ամենաշահագրգռուած ժողովուրդը¹²⁴:

Ինչպէս տեսնում ենք, Ադոսիդէսը հիմնաւորապէս հերքում է հայերին բարդուող զանազան մեղադրանքներ, որոնք առաջադրել են իրադարձութեան ժամանակակից տարբեր բարձրաստիճան թուրք պաշտօնեաներ՝ հայերին վարկարկելու եւ հայկական կոտորածների հարցում Օսմանեան իշխանութիւններին պատասխանատուութիւնից զերծ պահելու մտադրութեամբ:

Աղոսիդէսը բազմիցս փաստում է թէ՛ կոտորածների կանխամտածուածութիւնը եւ թէ՛ իշխանութիւնների թոյլութեամբ ինչ որ անհրաժեշտ էր կապար դերը՝ տարածաշրջանի տարրեր վայրերում ծաւալուած կոտորածները նախապատրաստելու գործում: Նա անվարան հաւաստում է, որ կոտորածի առաջին իսկ օրը, հայերն Աղանայում ոչնչացւում էին «իշխանութիւնների աչքի առջեւ», ինչին օժանդակում էին ոստիկանները՝ մարդասպաններին մատնացոյց անելով գոհերին: Միաժամանակ նա բացայայտում է տարածաշրջանում իր ենթակայութեան ներքոյ գտնուող պաշտօնեաներին՝ հայերի ոչնչացմանն առնչուող հրահանգներ ուղարկող Ջեւադի իրական դիմագիծը¹²⁵: Բազմաթիւ վայրերում, ըստ նրա վկայութեան՝ արձանագրուել են մահմեդական բնակչութեանը գէնք բաժանելու փաստեր, իսկ Ջերէլ Բերեքէթում կոտորածի պատրաստ թուրքերը, զինուել են «անձամբ կտրուելու»՝ Ասաֆ բէյի հոգածութեամբ» եւ քրիստոնեաներին գրոհել նրա՛ իսկ ազդանշանի հիման վրայ¹²⁶:

Չնայած այս եւ նման փաստերի արձանագրմանը, Աղոսիդէսը, սակայն, ձեռնպահ է մնում կոտորածների կանխամտածուած եւ նախապատրաստուած լինելու շուրջ իր դիրքորոշումը յայտնելուց: Նշելով թէ՛ թուրքերի եւ թէ՛ հայերի իրարամերժ տեսակէտներն այս առիթով, նա բաւարարւում է սոսկ վկայակոչելով Մերսինում Անգլիայի հիւպատոս Դաութի-Ուայլիի (Doughty-Wylie) հաղորդագրութիւնը, ըստ որի՝ «իշխանութիւնների մի մասը նախապէս տեղեակ է եղել ծրագրուած կոտորածների»¹²⁷, բայց, այդուհանդերձ, գերադասում է այս հարցը թողնել «օղում կախում»¹²⁸:

Քանի որ կիլիկեան կոտորածների երկու փուլին, ինչպէս եւ 1890ականներին, ակտիւօրէն մասնակցել են Օսմանեան զօրքերը, Աղոսիդէսը ըստ պատշաճի ընդգծում է նրանց դերը Կիլիկիայի տարրեր քաղաքներում (Մերսին, Տարսոն) թէ՛ հայկական ջարդերի, թէ՛ գոհերի ունեցուածքի կողոպուտի եւ թէ՛ զանազան վայրերում բնակավայրերի հրկիզման գործում¹²⁹: Հեղինակը մանրամասնում է մէկ էական հանգամանք՝ Աղանայում հայկական թաղամասերի վրայ գրոհել են կանոնաւոր զօրքերը, որի հետեւանքով Տոսպօ-Մահալէսի եւ Շարանիէ թաղամասերը հիմնովին աւերուել են: Տարսոնում, «ինչպէս ամէնուր, զօրքը մասնակցել է աշխատանքին», - ընդգծում է նա¹³⁰: Ընդհանուր առմամբ, արձանագրելով կանոնաւոր զօրքերի գործողութիւնները, նա, փաստօրէն, եւս մէկ անգամ անուղղակիօրէն հաւաստում է Օսմանեան

իշխանութիւնների՝ իրադարձութեանը նախապատրաստուած լինելու հանգամանքը:

Օսմանեան տարրեր՝ համիդեան եւ երիտթուրքական վարչակարգերի՝ 1909ի կիլիկիայում տեղի ունեցած կոտորածների խնդրում կրած պատասխանատուութեան հարցի շուրջ, սակայն, հեղինակը - ինչպէս եւ նրա ժամանակակիցները - չի ունեցել յստակ պատկերացումներ: Տարրեր առիթներով մանրամասն անդրադառնալով այս կարեւոր խնդրին, Աղոսիդէսը յայտնում է իրարամերժ կարծիքներ: Ըստ նրա առաջադրած մեկնարանութիւններից մէկի՝ «անկախ այն բանից կիլիկիայում կոտորածն Արդուլ Համիդն է հրահրել, թէ այլք, [դա] Ադանայի թուրքական տարրի գործն է եւ յետադիմական շարժման բաղկացուցիչ մասը, որը թէ՛ իր ծագմամբ եւ թէ՛ իր միտումներով բնորոշ է, մասնատրապէս Ասիական Թուրքիայում տիրող տրամադրուածութեանը»¹³¹:

Առաջին հայեացքից հեղինակը խուսափում է պատասխանատուութիւնը բացայայտորէն երիտթուրքերի կամ Սուլթանի վրայ բարդելուց, քանզի «տիրող» եւ «տիրապետութեան տակ գտնուող» ազգերի հակամարտութիւնը դիտում է իրրեւ հաշտութեան եզրեր չունեցող այնպիսի մի իրողութիւն, որը սահմանադրական դարաշրջանն ի վիճակի չի եղել յաղթահարելու: Գլխաւորապէս այս հանգամանքով է նա բացատրում հայերի կոտորածը, որը «կարող էր հնարատր լինել նոր վարչակարգի օրօք եւ նոյնքան անպատժելիօրէն իրականացուել Թուրքիայում թէ՛ սահմանադրութեան հռչակումից առաջ եւ թէ՛ յետոյ»¹³²:

Այնուամենայնիւ, քննարկենք երիտթուրքերի պատասխանատուութեան բացայայտման շուրջ Աղոսիդէսի որոշ դիտողութիւններ: Նա ընդունում է, որ 1908 աշունից ի վեր, կիլիկիայում նշմարուել է «հակահայ շարժում» եւ իրաւամբ նշում, որ կիլիկիահայերի դեկավարների՝ թէ՛ Ջեւադ բէյին եւ թէ՛ Ներքին Գործերի Նախարարին յղած բողոքները որեւէ արդիւնքի չեն յանգեցրել, քանզի Կոստանդնուպոլսում այդ նախազգուշացումները նոյնիսկ հաշուի չեն առնուել¹³³: Այլ կերպ ասած, հեղինակն անուղղակիօրէն ընդունում է երիտթուրքերի իրազեկութիւնը նախապատրաստող կոտորածներին եւ նրանց չկամութիւնն՝ իրավիճակը շտկելու, հետեւաբար կոտորածները կանխելու հարցում:

Աղոսիդէսը տեղեակ է նաեւ Ադանայի երկրորդ կոտորածին նախորդած ժամանակահատուածում երիտթուրքերի նախապատրաստական գործողութիւններին, որոնց ընթացքում նրանք ձերբակալել են մարտունակ հայերի, հայ բնակիչներից ազգրաւել զինամթերք, իսկ մահմեդականներին գէնք եւ զինամթերք բաժանել. «Կարճ ասած, ամէն

ինչ կանխատեսել են, ամեն ինչ նախապատրաստել, որպեսզի այս անգամ գործողութեանը ձեռնամուխ լինեն արագ, արմատական, անվրէպ ձեւով»¹³⁴։

Շատ աւելի հատու է երիտթուրքերի՝ հայկական կոտորածների իրականացման ասպարէզում ունեցած դերին նրա տուած մէկ այլ գնահատական. «Ճակատագրի անըմբռնելի շրջադարձով, հենց այս վարչակարգը, որից նրանք (հայերը - Վ.Պ.) ակնկալում էին իրենց փրկութիւնը, դարձաւ... նրանց սարսափելի ողբերգութեան պատճառը (ընդգծումը մերն է - Վ.Պ.)»¹³⁵։

Սակայն Ադոսիդէսի շարադրանքում հանդիպում ենք մէկ այլ՝ այս իրատեսական մեկնարանութիւններին անյարիր դատողութեան, որը վկայում է կոտորածների պատասխանատուութիւնը համիդեան վարչակարգի վրայ բարդելու միտումի մասին. «Կիլիկիայի հոլորոստն, անտարակոյս, երիտթուրքերի գործը չէ։ Այս հրեշաւոր յանցափորձի պատասխանատուութիւնը բարդում է յետադիմութեան եւ համիդեան վարչակարգի վրայ»¹³⁶։ Դրանով իսկ նա երիտթուրքերին, փաստօրէն, գերծ է պահում կիլիկիահայութեան կոտորածներում ունեցած նուազագոյն պատասխանատուութիւնից, իսկ նրանց յանդիմանում միայն՝ ջարդերից յետոյ հայերին անհրաժեշտ փոխհատուցումներ չյատկացնելու համար¹³⁷։

Առաւել եւս նախորդ հաւաստումների յետնախորքի վրայ՝ առաջին հայեացքից տրամաբանութեան շրջանակներում չտեղաւորուող՝ Ադոսիդէսի այս եզրայանգումը կարիք ունի մեկնարանութեան։ Բանն այն է, որ նման հետեւութեան համար, հաւանաբար, պատճառ է դարձել համիդեան վարչակարգի յղացած՝ արեւմտահայութեան բնաջնջման նպատակ հետապնդող մէկ այլ՝ լայնածաւալ ծրագրի իրականացման ձախողումը յեղաշրջման հետեւանքով։ Այս առիթով նա նշում է 1909 Մայիսին կարսում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Մուշում եւ Էրզրումում արիւնայի կոտորածների բռնկման վտանգի առկայութեան մասին եւ դրանց կանխումը բացատրում միայն երիտթուրքերի՝ վերստին իշխանութեան գլուխ անցնելով. «Առանց համիդեան յետադիմութեան նկատմամբ երիտթուրքերի տարած յաղթանակի, որտէ կասկած չի կարող լինել, որ կոտորածը կ'ընդգրկէր ամբողջ Անատոլիան», - գրում է նա¹³⁸։ Այս փաստի արձանագրումը վկայում է, որ Ադոսիդէսը չի ըմբռնել երիտթուրքերի կողմից այս ծրագրի կասեցման բուն պատճառները, որոնք էին՝ եւրոպական մեծ տէրութիւնների հնարաւոր միջամտութեան կանխումը եւ երիտթուրքական կառավարութեան՝ կատարեալ

վարկարեկումից խոյս տալու ցանկութիւնը¹³⁹։ Մեր կարծիքով, ամենայն հաւանականութեամբ, այս հանգամանքն է պատճառ դարձել, որ կոտորածների կազմակերպիչների բացայայտման հարցում Ադոսիդէսը յանգի հակասական մեկնարանութիւնների։

Արդիւնքում, ելնելով Ադոսիդէսի խորհրդածութիւններից, կարելի է հաւաստել, որ կիլիկիահայութեան կոտորածի հիմնական պատճառը նա, ի վերջոյ, փնտռում է թուրքերի մօտ արմատացած՝ քրիստոնեաների վրայ իշխելու մտայնութեամբ, որն արդէն դասւում է հոգեբանական գործօնների շարքում եւ ըստ որի՝ հարկ է, որ թուրքերը լինեն «արտօնեալ ժողովուրդ»։ «Անկասկած, չի հասել ժամանակը... երբ Թուրքիայում քրիստոնեայի իրաւունքը կարող է հաւասարակշռուել մահմեդականի շահի հետ», - եզրայանգում է նա¹⁴⁰։

Այսպիսով, միանգամայն ակնյայտ է, որ Ադոսիդէսը խարխափում է գանազան հակասութիւնների մէջ։

1- Բազմիցս շեշտելով 1909ի ողբերգութեան սանձազերծման եւ իրականացման գործում Օսմանեան իշխանութիւնների եւ տեղական պաշտօնեաների դերը, հեղինակն ակնարկում է իրադարձութեան՝ պետական քաղաքականութեան մակարդակով ծրագրուած լինելու մասին, սակայն, նրա հիմնական հետեւութիւններն, ի վերջոյ, անյարիր են այս հաւաստմանը։

2- Բացայայտելով հայկական կոտորածների պատասխանատուութիւնը հայերի վրայ բարդելուն ուղղուած օսմանեան իշխանութիւնների գործելամիջոցները, նա միաժամանակ նշանակութիւն է տալիս հայկական կարծեցեալ «ապստամբութեան»՝ իրականութեան հետ որեւէ առնչութիւն չունեցող վարկածին։

3- Տարբեր փաստերով հիմնաւորելով կիլիկիահայութեան բնաջնջումը՝ կանխամտածուածութեան հիման վրայ, հեղինակը, հակասելով իրեն, հայկական կոտորածները միաժամանակ պայմանաւորում է երկրորդական պատճառներով կամ հոգեբանական բնոյթի հանգամանքներով։

4- Ադոսիդէսի խորհրդածութիւններից դժուար է կողմնորոշուելն իսկ, թէ ո՛վ է նախաձեռնել 1909ի կոտորածները՝ երիտթուրքե՞րը, թէ՞ սուլթանական վարչակարգը եւ կամ ի՛նչ չափով են քաղաքական այս ճամբարները ներգրաւուած եղել կիլիկիահայութեան բնաջնջման գործընթացում, քանզի այս հարցի շուրջ յստակ պատկերացումներ նա թերեւ չի ունեցել։

Ըստ այս ամէնի՝ Աղոսիդէսի վերջնական եզրայանգումները մեր կողմից անընդունելի են:

Աղոսիդէսի անժխտելի արժանիքներից է, սակայն, կիլիկիահայութեան բնաջնջմանն առնչուող՝ մեծ թուով յարակից հարցերի քննարկումը: Դրանց թուում է կիլիկիայում բնակուող մահմեդականներից ումանց՝ հայերի հանդէպ ցուցարբերած բարեացակամ վերաբերմունքին առնչուող խնդիրը: Հիմնուելով եւրոպացի եւ հայ ականատեսների վկայութիւնների վրայ՝ նա արձանագրում է թէ՛ որոշ բարձրաստիճան թուրք ղեկավարների եւ թէ՛ սպաների ու շարքային քաղաքացիների «մարդասիրական ու մեծահոգի վերաբերմունքը», որոնք Աղանայում եւ այլ վայրերում (Օսմանիէ, Համիդիէ) օգնութեան ձեռք են մեկնել հետապնդուող հայերին, ապաստան տուել նրանց իրենց տներում¹⁴¹: Աղոսիդէսն արժանին է հատուցում յատկապէս Օսմանեան աստիճանաւորներին. «Քաղաքացիական եւ ռազմական պաշտօնեաներն աչքի են ընկել իրենց հաստատականութեամբ եւ դրսեւորած եռանդով», - նշում է նա¹⁴²:

Հեղինակը չի անտեսում նաեւ դեռեւս 1906-1907ի Աղանայի նախկին կառավարիչ Բահրի փաշայի հայանպաստ գործունէութիւնը, որը կանխել է Օսմանեան իշխանութիւնների նախապատրաստած՝ հայերի բնաջնջման ծրագրի իրականացումը¹⁴³: Ի շարս 1909ի կոտորածների ընթացքում իրենց մարդասիրութեամբ աչքի ընկած թուրք պաշտօնեաների, նա մատնանշում է Մարաշի կառավարչի, Մերսինի մութասարիՖ Էսադ բէյի, Կեսարիայի մութասարիՖ Ջեմալ բէյի՝ Ապրիլի կէսերին նախապատրաստուող հայկական կոտորածներին խոչընդոտելու ուղղութեամբ գործադրած ջանքերը: Վերջինս «կարգը պահպանելու համար վտանգել է իր կեանքը»: Աղոսիդէսը դրուատում է Լաթաքիայի մութասարիՖին՝ «քաղաքը կոտորածից փրկելու համար»¹⁴⁴:

Աղոսիդէսի շարադրանքին բնորոշ է եւս մէկ առանձնայատկութիւն: Նա յաւուր պատշաճի արժեւորում է կիլիկիայում հայերի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերի նշանակութիւնը, եւ հակասելով իրեն, ուշադրութիւնը կենտրոնացնում է խիստ էական՝ հայերի նախայարձակ շլինելու հանգամանքի վրայ, որոնք «պատրաստուել են սոսկ ինքնապաշտպանութեան»¹⁴⁵: 1894-1896ի հայկական կոտորածների ընթացքում հայերի կրաւորական դիրքորոշումն ինքնապաշտպանութիւն կազմակերպելու հարցում նա մեկնարանում է նրանց «կատարելապէս անգէն» լինելու հանգամանքով: Փոխարէն՝ «այս անգամ, շարունակում է նա, - նրանցից շատերն ունէին ատրճանակներ եւ որսորդական հրացաններ: Ուստի՝ նրանք յամառօրէն դիմադրել են»¹⁴⁶:

Հեղինակը նկարագրում է նրանց մղած պայքարին առնչուող մանրամասներ, որի հետեւանքով հակառակորդը «մեծ կորուստներ» է կրել: Խօսքը վերաբերում է, մասնաւորապէս ինքնապաշտպանութեան դիմած հայերի մարտավարութեան փոփոխութիւններին, որոնց շնորհիւ Աղանայում իրենց պատկանող երեք թաղամասում նրանք ոչ միայն 24ից 48 ժամ շարունակ հմտօրէն պաշտպանուել են, այլեւ գրաւել մզկիթներից մէկը, հակառակորդի յելուզակներին փախուստի մատնել, ըստ անհրաժեշտութեան՝ փողոցներում դիրքեր կառուցել եւ օգնութեան շտապել տներում պատսպարուածներին¹⁴⁷: Նա առանձնաշատուկ կերպով ընդգծում է հայերի՝ մինչեւ վերջ պայքարելու վճռակամութիւնը, փաստում, որ նրանց որոշ խմբեր, նոյնիսկ զինուորների եւ խաժամութի կողմից շրջափակուած, շարունակել են, այդուհանդերձ, դիմադրութիւնն Աղանայի փողոցներում: Հեղինակը վկայակոչում է Հաճընում - Ապրիլի 21ից 25ը - հայերի դիմադրութեանը վերաբերուող հաւաստի փաստեր, որի հետեւանքով բնակչութիւնը փրկուել է կոտորածից¹⁴⁸:

Աղոսիդէսը խօսքը կենտրոնացնում է նաեւ հայերի ինքնապաշտպանական մարտերի վրայ Կիլիկիային յարակից տարածաշրջաններում՝ արժեւորում Դէօրթ Եղում տասն օր շարունակ նրանց մղած յամառ պայքարը, Քեսարում՝ 140 մարտիկի կազմակերպած ինքնապաշտպանութիւնը, որի շնորհիւ քաղաքի հայ բնակչութեանը հնարաւորութիւն է ընձեռուել փախչելու լեռները¹⁴⁹:

Աղոսիդէսը տարրեր առիթներով համակողմանի վերլուծում է նաեւ եւրոպական մեծ տէրութիւնների քաղաքականութեանն առնչուող խնդիրներ թէ՛ դեկավար շրջանակների պաշտօնական միջամտութեան, եւ՝ թէ՛ կայսրութեան տարածքում հաւատարմագրուած դիւանագէտների գործադրած անձնական ջանադրութեան կտրուածքներով: Նրա դիտարկումներում հարկ է նախ՝ առանձնացնել կիլիկիահայութեան հանդէպ եւրոպական պետութիւնների դրսեւորած անտարրեր դիրքորոշման քննադատումը: Նա ցաւով հաւաստում է, որ Աղանայում տեղի ունեցած ողբերգութիւնը եւրոպական տէրութիւնների կառավարութիւնների կողմից մնացել է գրեթէ աննկատ, ինչն իրաւամբ մեկնարանում է գլխաւորապէս Օսմանեան կայսրութիւնում մեծ տէրութիւնների Ֆինանսական շահախնդրութիւններով, քանզի վերջիններս համար (ինչպէս եւ ժ.թ. դարի ԾՕականներին), առաջնային նշանակութիւն շարունակում էին ունենալ իրենց պետութիւնների Ֆինանսիստների շահերը¹⁵⁰:

Ինչ վերաբերում է տէրութիւնների քաղաքականութեան քննադատութեանը՝ Ադոսիդէսը բացայայտում է նաեւ հայերի հանդէպ նրանց անկարեկից վերաբերմունքի կարեւոր պատճառներից մէկը՝ Օսմանեան կայսրութեան ճակատագրի հանդէպ, ինչպէս եւ ոչ-հեռաւոր անցեալում, նրանց միջեւ միասնական դիրքորոշման կատարեալ բացակայութիւնը: Յայտնելով իր վրդովմունքն այն առիթով, որ կոտորածների ընթացքում տէրութիւնները սահմանափակուել են սոսկ Բարձր Դռանը «քարեկամական» խորհուրդներ տալով, Ադոսիդէսը եւս մէկ անգամ դա պատճառաբանում է նրանց յատուկ եսասիրական դրդապատճառներով. «Նրանց ներկայացուցիչները, որոնք աւելի քան երբեւէ, կլանուած են գործերի, պատուէրների, կոնցեսիաների ընթացքով, զբաղուած են միայն երիտթուրքերին շողորթելով, գրեթէ այնպէս, ինչպէս շողորթում էին Երլըրգ Քեօշքին»¹⁵¹:

Խիստ քննադատելով մեծ տէրութիւնների ղեկավար չրջանակներին՝ հայ ժողովրդի բնաջնջմանն ի տես, փաստօրէն, անգործունեայ դիտորդի դերում հանդէս գալու համար, Ադոսիդէսն, այնուամենայնիւ, յիշատակում է, որ կոտորածների ընթացքում նրանց ռազմականները մօտեցել են կիլիկիայի եւ Սիրիայի ափերին, չյստակեցնելով սակայն, թէ որ տէրութիւններին է խօսքն առնչուում¹⁵²: Թէպէտ դրանց ներկայութիւնը նա իրաւամբ անօգուտ չի համարում, այդուհանդերձ, ցուցաբերելով շատ աւելի իրատեսական մօտեցում, նշում է, որ «այդ միջամտութիւնը եղել է խիստ սահմանափակ եւ նպաստել միայն ծովափի մերձակայքում գտնուող մի քանի բնակավայրերի պաշտպանութեանը»¹⁵³: Այս հարցում սակայն նրա մեկնարանութիւնները հեռու են սպառիչ լինելուց, քանզի նա չի մատնանշում ռազմականների՝ հայերի ոչնչացման գործընթացին չմիջամտելու հիմնական պատճառները (անկում ապրող կայսրութեան նկատմամբ ունեցած գաղութատիրական յաւակնութիւնների հարցում տէրութիւններին ծուլատող փոխադարձ կասկածները, գործողութեան միասնական ծրագրի բացակայութիւնը, իւրաքանչիւր տէրութեան շահագրգռուածութիւնը միայն իր քաղաքացիներին օգնութեան հասնելու հարցում եւն.)¹⁵⁴:

Հեղինակը սակայն յիշատակում է այն դիւանագէտների անունները, ովքեր նպաստել են հայերի փրկութեանը: Նա դրուատում է յատկապէս Ապրիլի 14ին Ադանա ժամանած՝ Մերսինում Անգլիայի փոխհիւպատոս Դաուլթի-Ուալլին, որն իր տիկնոջ հետ գործել է «քաջութեան եւ նուիրուածութեան սխրանքներ» եւ փրկել բազմաթիւ հայերի: Նրանց հնարաւորութիւններն եղել են խիստ սահմանափակ, ինչը հեղինակն ի-

բաւամբ պատճառարանում է եւրոպական այլ երկրների դիւանագէտների մօտ համապատասխան համահունչ քայլեր ձեռնարկելու ցանկութեան բացակայութեամբ¹⁵⁵ :

Փոխարէնը, նա գովերգում է Հայէպում Ֆրանսիայի հիւպատոս Ֆերնան Ռոքեֆերրիի գործադրած ջանքերը, որը տասնեօթ օր շարունակ երկու հարիւր հեծեալի գլուխն անցած զէնքը ձեռքին պաշարել է յանուն տարրեր վայրերում տեղարնակների փրկութեան¹⁵⁶ :

Աղոսիդէսի գրքի քննարկումը եզրափակելուց առաջ նշենք, որ մենք ընդունում ենք այն անուրանալի աւանդը, որը - չնայած որոշ ոչ-սպառիչ, անգամ հակասական մեկնարանութիւններին, այդ թւում սկրզբունքային հարցերում - նա ներդրել է 1909ի կիլիկիահայութեան կոտորածների պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում: Թէ՛ Ադանայում եւ թէ՛ տարածաշրջանում տեղի ունեցած անցքերի բացայայտմանը վերաբերող նրա մանրագնին նկարագրութիւնները մեծապէս նպաստել են եւրոպացի ժամանակակիցների իրազեկմանը, նրանց տեղեկատուութեան ընդլայնմանը:

G. VAYSSIÉ

Կիլիկեան կոտորածների ականատեսներից ստացած մանրամասն տեղեկութիւններ է ամփոփում Ժ. Վեսսիէի յօդուածը: Իր իսկ հաւաստմամբ՝ 1890ականներից ի վեր հեղինակը հետաքրքրութիւն է դրսեւորել արեւմտահայութեան ճակատագրի հանդէպ եւ այցելել է այն վայրերը, որոնք 1895-1896ին դարձել են հայկական կոտորածների թատերաբեմեր¹⁵⁷ : Միեւնոյն սրտցաւ վերաբերմունքն է նա դրսեւորել 1909ին կործանման դատապարտուած կիլիկիահայութեան նկատմամբ: Կոտորածներին առնչուող «սարսափազդու լուր»ն ստանալուց անմիջապէս յետոյ, նա վճռել է մանրագնին հետաքննութեան հիման վրայ եւրոպացիներին տեղեկացնել կիլիկեան կոտորածների պատճառների ու հետեւանքների մասին¹⁵⁸ :

Վեսսիէն գրուցել է ոչ միայն տարբեր երկրներում (Եգիպոս, Միրիա, Կիպրոս) հանգրուանած՝ աղէտից մազապուրծ կիլիկիահայերի, այլեւ Օսմանեան իշխանութիւնների ներկայացուցիչների, եւրոպական հիւպատոսութիւնների աշխատակիցների հետ եւ նրանցից ստացել հարուստ տեղեկութիւններ: Նրա յօդուածը, սակայն, ըստ էութեան, հետազօտական բնոյթ չի կրում, քանզի հեղինակը բաւարարւում է գլխաւորապէս իրադարձութեան շուրջ ականատեսների՝ երբեմն հակասական դիրքորոշումներն արտացոլող գնահատականների դրոշմը կրող

տեղեկութիւններն վերաշարադրմամբ՝ չցուցարբերելով քննադատական մօտեցում:

Վեսսիէի յօդուածը հիմնուած է աւելի քան յիսուն հայ ականատեսների վկայութիւններն վրայ¹⁵⁰: Եթէ վերջիններս կիլիկեան կոտորածների սանձագերծումը պայմանաւորում են առաւելապէս 1909ի Մարտի 31ի յեղաշրջմամբ¹⁵⁰, ապա իրադարձութեան երկրորդ փուլի առիթով արդէն յիշատակում են սահմանադրական գորքերի Ադանա ժամանման եւ կիլիկիահայութեան բնաջնջման գործընթացին նրանց մասնակցութեան, կազմակերպուած ձեւով կոտորածի իրականացման մասին: Ըստ նրանց՝ մարդասպանների մի խումբ սպանում էր, ոմանք կողոպտում էին, այլք՝ հրկիզում¹⁶¹:

Հայ գաղթականների հաղորդած տեղեկութիւնները պարունակում են յիշարժան մի մանրամասն, թէ՛ ինչպէս 1890ականներին տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պարագայում, 1909ի կոտորածներին վերաբերող հրահանգը նոյնպէս տրուել է Կոստանդնուպոլսից: Այսպիսով, կիլիկիահայութեան ոչնչացման գործընթացը նրանք մեկնաբանում են, փաստօրէն, իբրեւ պետական քաղաքականութեան մակարդակով տեղի ունեցած իրադարձութիւն, դեռեւս ի վիճակի չլինելով յստակեցնելու, այդուհանդերձ, սուլթանական վարչակարգի եւ երիտթուրքերի պատասխանատուութեան չափը: Փոխարէնը, նրանք փաստում են տեղական իշխանութիւնների ղեկավար դերը կոտորածների իրականացման գործում, յատկապէս մատնանշելով Զեւադի եւ Ռեմզիի հայատեաց դիրքորոշումը, որոնք ոչ միայն փոքր-իսկ ցանկութիւն չեն դրսեւորել կանխելու կոտորածները, այլեւ նպաստել են դրանց սանձագերծմանը¹⁶²:

Ինչ վերաբերում է հեղինակի մէջբերած՝ թուրք ականատեսների վկայութիւններին, ապա նրանց՝ իրադարձութեան պատասխանատուութիւնը հայերի վրայ բարդելու ճիգերը¹⁶³, կիլիկիահայերի հաւաստումների յետնախորքի վրայ, մեղմ ասած, ամէնեւին համոզիչ չեն թւում: Առաւել եւս, որ նրանց յերիւրանքները հիմնովին հերքում են նաեւ եւրոպացի ժամանակակիցները: Վերջիններս, որոնց վկայութիւններին Վեսսիէն նշանակալից տեղ է յատկացնում, միանշանակօրէն արձանագրում են Զեւադի եւ Ռեմզիի՝ Արդուլ Համիդի շրջապատի հետ վաղուց ի վեր ունեցած առնչութիւնները եւ հաւաստում, որ Օսմանեան տեղական ղեկավարները համոզուած են եղել Սուլթանի կողմից նախապատրաստող պետական յեղաշրջման փորձի բարեյաջող ելքին¹⁶⁴: Դրանով իսկ նրանք բացայայտում են կիլիկիահայութեան կոտորածներին՝ կանխա-

մտածուած լինելու փաստը Մասնաւորապէս, մանրամասնուում է մի էական հանգամանք, ըստ որի՝ Մարտի 31ի յեղաշրջումից յետոյ, Ջեւաղն, ամենայն հաւանականութեամբ, հայերի դէմ ուղղուած ցեղասպան քաղաքականութիւնն Ադանայում իրականացրել է Սուլթանի շուրջ համախմբուած յանցախմբի՝ Պալէի աջակցութեամբ¹⁶⁵ :

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ կոտորածների կազմակերպիչների բացայայտման հարցում Ֆրանսիացի ժամանակակիցների մեկնաբանութիւնները եւս ոչ միայն հեռու են սպառիչ լինելուց, այլեւ միանշանակ չեն: Կիլիկիահայութեան բնաջնջման համար նրանք պատասխանատու են համարում սուլթան Արդուլ Համիդին, որն իր բացարձակ իշխանութեան վերահաստատման նպատակով յղացել է Բոսֆորից մինչեւ Եգիպտոս՝ Փոքր Ասիայի ամբողջ տարածքում բնակուող բոլոր ժողովուրդների «համընդհանուր կոտորած»-ի իրականացման «հրէշաւոր ծրագիր»: Նրանց մեկնաբանութիւններից կարելի է սոսկ կուահել, որ արեւմտահայութիւնը լայնածաւալ բնաջնջումից փրկուել է, քանզի սահմանադրական գործերի միջամտութեան շնորհիւ Կոստանդնուպոլսում տապալուել է Արդուլ Համիդի վերահաստատուած իշխանութիւնը, ինչը կանխել է Սուլթանի՝ Կայսրութեան տարածքում բնակուող բոլոր ժողովուրդների ոչնչացմանն առնչուող հրէշաւոր ծրագրի իրականացումը¹⁶⁶ : Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածների առնչութեամբ եւրոպացի ժամանակակիցներն իրաւամբ նշելով, որ յետադիմական ուժերն աչստեղ գործելու լայն հնարաւորութիւններ են ունեցել, այդուհանդերձ, երիտթուրքերի ղեկավար դերի մասին որեւէ ձեւով յստակօրէն չեն մատնանշում: Նրանք բաւարարուում են սոսկ կոտորածների երկրորդ փուլին՝ սահմանադրական գործերի ունեցած մասնակցութեան չիշատակմամբ¹⁶⁷, հաւաստում հայերի կրած մարդկային եւ նիւթական մեծ կորուստները, ինչպէս նաեւ նրանց բնաջնջման մեղաւորներ համարում Ջեւաղին եւ Ռեմզիին¹⁶⁸ :

Ինչ վերաբերում է Վեսսիէի միջամտութիւններին, ապա դրանք իրադարձութեան շուրջ հեղինակի յստակ դիրքորոշման մասին չեն վկայում: Հեղինակային խօսքը նշմարուում է հազուադէպ: Կարելի է ասել, որ նա թերեւս ամբողջութեամբ չի պատկերացրել հայկական կոտորածներին առնչուող հանգամանքները, որոնց շուրջ ցանկութիւն է գրասեւորել յստակութիւն սահմանել: Ի վերջոյ, 1909ի կիլիկիահայութեան ջարդերը նա բնորոշում է ոչ միայն իրրեւ «նորագոյն ժամանակներում արձանագրուած ամենասարսափելի կոտորածներից մէկը»¹⁶⁹, այլեւ՝ «հակաքրիստոնէական շարժում»¹⁷⁰, հարցի մեկնաբանութիւնն,

այսպիսով, սահմանափակելով գլխաւորապէս կրօնական առճակատման շրջանակներում: Աւելին, կոտորածների հեղինակներ նա համարում է քրդերին¹⁷¹: Նման մակերեսային մեկնարանութիւնները վկայում են, որ իրադարձութիւնների ականատեսներից ստացած բազմազան եւ, անտարակոյս, երբեմն չհամընկնող, անգամ հակասական, տեղեկութիւնների հանդէպ նա չի դրսեւորել քննադատական մօտեցում, ի վիճակի չի եղել թերեւս կողմնորոշուելու 1909ի կոտորածներին վերաբերող առանցքային հարցերում եւ, ըստ էութեան, չի ըմբռնել նոյնիսկ դրանց իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով:

Իրականութեանը չհամապատասխանող գնահատականներ պարունակող Վեսսիէի յօդուածն, ընդհանուր առմամբ, յիշեցնում է շատ աւելի՝ յուշապատում, քան՝ գիտական ուսումնասիրութիւն: Ուստի՝ մեր համոզմամբ այն ունի շատ աւելի աղբիւրագիտական, քան գիտական արժէք: Ամէն դէպքում, քանի որ նրա յօդուածը եւրոպական հասարակութեան ուշադրութիւնը կիլիկիահայութեան կոտորածների վրայ հրաւիրելու փորձ է, ապա յատկանշական է արժեւորել գլխաւորապէս դրա ճանաչողական նշանակութիւնը:

RENÉ MOULIN

Օսմանեան Կայսրութիւնում ընթացող քաղաքական խմորումներին եւ դրանց հենքի վրայ 1909ին կիլիկիայում հայկական կոտորածներին տարբեր կտրուածքներով անդրադարձել են Փրանսիացի մի շարք այլ պատմաբաններ: Պատմագիտական տեսանկիւնից առաւել արժէքաւոր է Ռընէ Մուլէնի՝ երիտթուրքերի իշխանութեան գալու ժամանակաշրջանում Թուրքիայում տիրող իրավիճակին նուիրուած գիրքը¹⁷²: Թէեւ նա չի հետապնդել 1909ի կիլիկիահայութեան կոտորածները մանրամասնօրէն ուսումնասիրելու նպատակ, այնուամենայնիւ, Թուրքիայում տիրող ընդհանուր իրավիճակին տուած նրա գնահատականները հնարաւորութիւն են ընձեռում ճշգրտելու հեղինակի դիրքորոշումն այս խնդրին առնչուող մի շարք էական հարցերում: Այստեղ կ'անդրադառնանք երկու հիմնահարցի շուրջ հեղինակի մեկնարանութիւններին:

Մուլէնը մանրամասնօրէն քննարկում է ազգային հարցի առանձնաշատկութիւնները Թուրքիայում 1908ի երիտթուրքական յեղափոխութիւնից յետոյ եւ ջանում մեկնարանել ազգային փոքրամասնութիւնների հանդէպ իշխանութեան եկած նոր ուժերի քաղաքականութեան էութիւնը: Օսմանեան Կայսրութիւնում ազգամիջեան փոխյարաբերութիւններին քաջատեղեակ հեղինակն, իրաւամբ, որեւէ կասկած չի տա-

ծում, որ մահամեղական բնակչութիւնը խիստ բացասական վերաբերմունք է դրսեւորել 1908ին ազդարարուած՝ 1876ի Օսմանեան սահմանադրութեան վերահաստատման հանդէպ: Նա նշում է, որ քրիստոնեաների եւ մահամեղականների իրաւահաւասարութեան հռչակմամբ Անատոլիայում բնակուող մահամեղական գիւղացիների ոգեւորումը, սուլթանի՝ իրենց շնորհած արտօնութիւնների կորստի հետ այլանացիների համակերպումը, «հայերին այլեւս չկոտորելու», «նոյնիսկ իրենց գոհերի փոխարէն դատուելու ու մահապատժի ենթարկուելու» գաղափարի հետ քրդերի հաշտուելը, ինքն ընկալել է իրրեւ «ցնորական ուտոպիա»՝ դեռեւս նախքան Ադանայի կոտորածները¹⁷³: Ինչպէս տեսնում ենք, քրիստոնեաներին իրրեւ ստորադասների վերաբերուելու՝ Կայսրութեան տարածքում բնակուող մահամեղականների մօտ դարերից ի վեր արմատացած մտայնութեան բացայայտման հարցում (ինչը դասուում է հոգեբանական գործօնների շարքում), հեղինակը դրսեւորում է անկողմնակալ մօտեցում:

Ինչ վերաբերում է, սակայն 1908ի յեղափոխութիւնից յետոյ Օսմանեան պետութեան ղեկավարման մէջ երիտթուրքերի ունեցած մասնակցութեանը, Մուլէնի մեկնաբանութիւններում ակնյայտ է նրանց ղեկավար դերն անհարկի նսեմացնելու միտում: Նա գտնում է, որ 1908 Յուլիսից մինչեւ 1909 Ապրիլ՝ երիտթուրքերն ունեցել են շատ համեստ դեր, որն, ըստ էութեան, չէր կարող վճռորոշ նշանակութիւն ունենալ կարեւոր հարցերին լուծում տալու ասպարէզում: Երկրում տեղի ունեցած զանազան գործընթացներում երիտթուրքերի պատասխանատուութեան նուազեցման մասին է վկայում նաեւ հեղինակի այն հաւաստումը, թէ՛ նրանք պետութիւնը ղեկավարել են կառավարման այնպիսի անձնակազմի միջոցով, որի «մեծամասնութիւնը հաւաքագրուել էր հին վարչակարգի համագործակիցների թուից»: Հաշուի չառնելով, սակայն, որ տուեալ պարագայում խօսքը վերաբերում է սոսկ ենթակայ պաշտօնեաներին, որոնք չէին կարող մշակել պետական քաղաքականութեան գերակայ ուղղութիւնները, հեղինակը յանգում է անընդունելի հետեւութեան. «Իրականում պարտականութիւնների կատարմանը երիտթուրքերը ձեռնամուխ են եղել 1909 Ապրիլ ամսից ի վեր: Երկու կը լինի, արդարացի կը լինի, նրանց գործունէութեան մասին դատողութիւններ անել, նրանց պատասխանատուութիւնը ճշգրտել սկսած այն պահից, երբ նրանց գործունէութիւնը կեանքի է կոչուել ամբողջ թափով»¹⁷⁴: Այս եզրայանգմամբ նա երիտթուրքերին, ըստ էութեան, զերծ է պահում 1908ի յեղափոխութիւնից յետոյ Օսմանեան իշխանութեան առջեւ ծա-

ուացած զանազան հարցերի լուծմանն ունեցած մասնակցութիւնից եւ նրանց վրայ բարդուող պատասխանատուութիւնից: Իրականում, երիտթուրքերը, ինչպէս ապացուցել են խորհրդային թուրքագէտները, յեղափոխութիւնից յետոյ իրենց կազմակերպութիւնը վերածելով Միութիւն եւ Առաջադիմութիւն քաղաքական կուսակցութեան՝ ի սկզբանէ իրենց ձեռքում են կենտրոնացրել փաստական իշխանութեան ղեկը եւ տուեալ ժամանակաշրջանում Օսմանեան Կայսրութիւնում տեղի ունեցած բոլոր իրադարձութիւնների գլխաւոր պատասխանատուներն են¹⁷⁵:

Հարկ է նշել, որ Մուլէներ բազմիցս անդրադառնում է օսմանացման քաղաքականութեան կիրառմանը, ընդհանուր գծերով յիշատակում թուրքիայում բարենորոգումների կողմնակիցների հետապնդած նպատակների մասին: Հեղինակը թէպէտ չի պարզարանում քաղաքական տարրեր ուղղութիւնների ներկայացուցիչների ինքնութիւնը, այդուհանդերձ, շատ աւելի համակրում է ոչ թէ «քաղաքացիական եւ կրօնական հաւասարութեան հիման վրայ ազգութիւնների համատարած ձուլման»ը, այն է՝ բռնի օսմանացմանը հետամուտ քաղաքական ուժերին, այլ՝ թուրք յայտնի քաղաքական գործիչ Սարահէղղինի կողմնակիցներին: Քանի որ վերջիններս, ի տարրերութիւն՝ վարչական կենտրոնացման ջատագով Միութիւն եւ Առաջադիմութիւն կուսակցութեան անդամների¹⁷⁶, հետամուտ էին Օսմանեան թուրքիայի ոչ թէ քաղաքական, այլ վարչական ապակենտրոնացմանը եւ սահմանադրական միապետութեան հաստատմանը¹⁷⁷, Մուլէներ գտնում է, որ նրանք «ի վիճակի էին էթնիկական խմբաւորումների համար ապահովել վարչական երաշխիքներ»¹⁷⁸: Յուշաբերելով իրատեսական մօտեցում՝ նա ցաւով արձանագրում է, որ հայերի կողմից նոր իշխանութիւններին ներկայացուող պահանջները անհանգստացնում էին նրանց, ովքեր «երազում էին հայկական տարրի համատարած թափանցումը՝ թուրքական տարրի մէջ»¹⁷⁹: Այդ պահանջները հայերի անվտանգութեան եւ արդարութեան ապահովմանն էին վերաբերում: Հայ ժողովրդի ձուլման տարրերակը նա իրաւամբ համարում է «անհնարին» եւ ընդգծում, որ մեծամասնութիւն կազմող «խելամիտ» թուրքերը մերժում էին նման «վտանգաւոր միտումները»¹⁸⁰:

Մուլէնն անուղղակիորէն նուազեցնում է նաեւ իշխանութեան գլուխ անցած երիտթուրքերի պատասխանատուութիւնն ազգային հայտեաց քաղաքականութեան ասպարէզում: Հեղինակն «ազգութիւնների հարց»ը համարում է ոչ միայն ամենարարդը, այլեւ այն բնորոշում է իրրեւ «յաւերժական հակամարտութիւն, որը տարանջատում է իշխող

թուրքին եւ նուաճուած ժողովուրդներին», հաւաստում, որ երկրում չկար որեւէ հարց, որի լուծումն աւելի մեծ դժուարութիւններ յարուցէր¹⁸¹։ Ազգային հարցին նրա մօտեցման անկիւնաքարը բազմիցս շեշտուող՝ քրիստոնեաների հանդէպ մահմեդականների մօտ արմատացած խոր ատելութեան հանգամանքն է։

Այս հայեցակարգի շրջանակներում Մուլէնը սոսկ հպանցիկ յիշատակում է նաեւ «Աղանայի սարսափելի իրադարձութիւններ»ի մասին¹⁸²։ Նա ոչ միայն շրջանցում է Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածներին առնչուող մանրամասները, որոնց անդրադառնալը, հաւանաբար, նրա հիմնական խնդիրների մէջ չի ընդգրկուել, այլեւ ամենայն հաւանականութեամբ՝ անհրաժեշտ տեղեկատուութեան բացակայութեան պայմաններում՝ չի անդրադառնում նաեւ կոտորածների պատճառներին, դրանց զարգացման փուլային ընթացքին։ Նա ձեռնպահ է մնում նոյնիսկ նուազագոյն մեկնարանութիւններից։ Ըստ ստացուող տպաւորութեան՝ հեղինակը «երեք քաղաք»ում եւ «Նօթանասուն գիւղ»ում բնակուող հայութեան բնաջնջման պատասխանատուութիւնն ամբողջութեամբ բարդում է քուրդ մարդասպանների վրայ, որոնց՝ աւերածութիւններ սփռելու մոլուցքը ոչ մէկի չի խնայել եւ պատճառ է դարձել Փոքր Ասիայի ամենարարգաւաճ նահանգներից մէկի ամայացմանը մի քանի ժամում¹⁸³։

Մուլէնն արդարացի է համարում հայերի՝ փոխհատուցում ստանալու եւ «քոլոր մեղաւորներին» պատժելու պահանջները, որոնց թւում, ըստ նրա հայեցակարգի՝ երիտթուրքերը կամ սուլթանական վարչակարգի պաշտօնեաներն ընդգրկուում են այնքանով, որքանով դաւանում են իսլամը։ Այսպիսով, նա յանիրաւի ժխտում է Օսմանեան ղեկավար գործիչների քաղաքական դրրդումով փոքր-իսկ մասնակցութիւնը հայկական կոտորածների կազմակերպմանն ու սանձազերծմանը, դրանց պատասխանատուութիւնը ընդհանուր առմամբ բարդելով նրանց՝ (գուցէ՛ իրրեւ իսլամի հետեւորդների վրայ) կրօնական պատկանելիութեան վրայ։

Հեղինակը բազմիցս հաճոյքով ընդգծում է Օսմանեան կառավարութեան «քարի կամքը» ոճրագործութեան մեղաւորներին պատժելու հարցում¹⁸⁴, սակայն նրա անվճռականութիւնը բացատրում է մահմեդականների մօտ արմատացած՝ հայերի հանդէպ անբարեացակամ վերաբերմունքով եւ փորձում նոյնիսկ արդարացնել այդ «անվճռականութիւն»ը։ «Կոտորածների հեղինակներին՝ մահմեդականներին (ընդգծումը մերն է - Վ.Պ.) հարուածելն արդեօ՞ք հաւասարագօր չէր նոր

վարչակարգի վարկաբեկմանն այն ժողովուրդների աչքում, որոնք [արդեն] գրգռուել էին 1908ի յուլիսեան իրադարձութիւններին յաջորդած՝ հայերին համակած մեծ ուրախութեան եւ յաղթական կեցուածքի պատճառով», - գրում է նա¹⁸⁵։ Մուլէնը, փաստօրէն, Օսմանեան պաշտօնեաներին յանդիմանում է միայն այն բանի համար, որ նրանք դարձել են «սարսափի եւ կողոպուտի տեսարանների ներողամիտ եւ անվրդով վկաները»¹⁸⁶։

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, 1909ին Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածները Մուլէնը մեկնաբանում է բացառապէս հայերի եւ մահմեդականների միջեւ կրօնական դաւանանքների գանազանութեան հետեւանքով դարերից ի վեր խոր արմատներ ձգած հակակրօնքով։ Միանգամայն ակնյայտ է, որ այս պայմաններում, թէ՛ երիտթուրքերի եւ թէ՛ Մուլթանի պաշտօնեաների վրայ փոքր-իսկ պատասխանատուութիւն բարդելու մտադրութիւնից հեռու հեղինակն անտեսում է կոտորածների՝ պետական քաղաքականութեամբ պայմանաւորուած լինելու իրողութիւնը։

Մուլէնը մեղաւորների դատավարութեան առնչութեամբ՝ մահմեդականների մեղսակացութիւնը հայկական կոտորածներին համարելով «անառարկելի», որեւէ կասկած չի տածում շատ հայերի վրայ բարդուած պատասխանատուութեան անհիմնութեան մասին, որոնք սակայն «ձերբակալուել են, յանձնուել ռազմական դատարանին եւ մահապատժի ենթարկուել»¹⁸⁷։

Մուլէնն անդրադառնալով Հայկական Հարցին՝ երիտթուրքական յեղափոխութիւնից յետոյ, հաւաստում է առաջինը սահմանադրութիւնը ողջունած հայերի՝ նոր իշխանութեանը սատարելու պատրաստակամութիւնը։ Հայերի գանգատները նա համարում է «օրինական», իսկ անվտանգութեան եւ արդարութեան երաշխիքներին առնչուող պահանջները՝ «համեստ»։ Նոյնիսկ այս պայմաններում, սակայն, ելնելով իր համոզմունքներից՝ Մուլէնն անարդարացիօրէն պնդում է, որ «երիտթուրքերը ժառանգորդներն են մի իրավիճակի, որի ստեղծմանը նրանք բացարձակապէս չեն նպաստել եւ հարկադրուած են՝ ժողովրդական շարժմամբ գահընկէց լինելու սպառնալիքի տակ, դիմել փոխգիջումների եւ կիսատ-պոստ միջոցների, որոնք հակասում են իրենց անժխտելի բարի կամքին»¹⁸⁸։

Միաժամանակ հարկ է նշել, որ մեր կարծիքով, Մուլէնը գիտակցաբար չի խեղաթիւրել իրականութիւնը։ Կիլիկիահայութեան բնաջնջման հարցում նրա դիրքորոշումը պայմանաւորուած է եղել, հաւանաբար,

Թուրքիայում ընթացքի մէջ գտնուող իրադարձութիւնների մեկնարան-
ման նրա ընդհանուր հայեցակարգով: Ամենայն հաւանականութեամբ,
նա թերեւս չի ըմբռնել երիտթուրքական յեղափոխութեան իրական ի-
մաստը, չի կողմնորոշուել իշխանութեան եկած եւ ազգայնամոլու-
թեամբ համակուած գաղափարախօսութիւն որդեգրած քաղաքական
նոր ուժերի հեռահար մտադրութիւնների լարիրինթոսում: Հակառակ
դէպքում ի՞նչով բացատրել այս ժամանակաշրջանում դեռեւս օսմա-
նացման քաղաքականութեան կիրառման հարցում երիտթուրքերի հան-
դէպ նրա բռնած բացասական, սակայն խիստ չափաւոր դիրքորոշումը:
Արդիւնքում՝ հայկական կոտորածների շուրջ նրա մեկնարանութիւննե-
րը թէ՛ թերի են, թէ՛ մակերեսային եւ թէ՛ իրականութեանը չհամապա-
տասխանող: Ըստ այդմ՝ նրա հիմնական եզրակացութիւնները, որոնք
մենք հակուած չենք դիտելու իբրեւ Օսմանեան կառավարութեան հա-
կահայ քաղաքականութիւնն արդարացնելու փորձ, այդուհանդերձ, ա-
նուղղակիորէն նպաստում են դրան:

A. SARROU, COMTE DE LANDEMONT, H. BARBY, P. LOUIS,
I. PAUL, L. COLLAS

1909ի կիլիկեան կոտորածներին տուած գնահատականի հարցում
իրադարձութիւնների ականատես Ա. Սարրուն, անտարակոյս, տուրք է
տալիս անհարկի ծայրայեղութիւնների, հայկական կոտորածների պա-
տասխանատու ճանաչում բացառապէս համիդեան վարչակարգը, ինչը
պայմանաւորուած է երիտթուրքերի քաղաքականութիւնը եւ նրանց
գաղափարները մեծարելու նրա դիրքորոշմամբ: Նա ապացուցում է, որ
համիդեան յեղաշրջմանը յաջորդած օրերին երիտթուրքերի իշխանու-
թիւնն Օսմանեան կայսրութեան տարածքում, այդ թւում հայկական
վիլայէթներում, չի սասանուել շնորհիւ նախկին ութ միսների ընթաց-
քում նրանց ծաւալած գործունէութեան, ինչի հետեւանքով «նոր գա-
ղափարներն արդէն արագ տարածում են գտել»:

Ինչ վերաբերում է սակայն Կիլիկիային, ապա նա իրաւամբ ընդու-
նում է, որ այստեղ յետադիմութիւնն ունեցել է պարարտ հող, իսկ
«պաշտօնեաները, թում է, թէ ոչինչ չեն հակադրել կոտորածների
հրահրիչների սաղրանքներին»¹⁸⁹: Սակայն ամբողջովին չկողմնորոշ-
ուելով ոչ միայն Կիլիկիայում, այլեւ կայսրութեան տարածքում առհա-
սարակ երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութեան ոլորտում,
Սարրուն գտնում է, որ «սարսափելի ոճիրները պատուազրկում են
հին՝ համիդեան վարչակարգը, այլ ոչ թէ Երիտասարդ Թուրքիային»:

եւ քննադատական խօսքեր է ուղղում նրանց հասցէին, ովքեր ջանացել են վարկարեկել երիտթուրքերին¹⁹⁰։ Այսպիսով, երիտթուրքերին յանրաւի ամբողջութեամբ գերծ պահելով հայկական կոտորածների կազմակերպման հարցում փոքր-իսկ պատասխանատուութիւնից, նա, փոխարէնը, կիլիկիահայութեան կոտորածների համար մեղաւոր է ճանաչում միայն սուլթանական վարչակարգին եւ յանգում միանգամայն անընդունելի եզրակացութեան. «Հաւաստի է, որ միեւնոյն կուսակցութիւնն էր, որը կազմակերպեց յետադիմութիւնը մայրաքաղաքում եւ կարգադրեց իրականացնել Ադանայի սարսափելի կոտորածները»¹⁹¹։

Փոխարէնը, բոլորովին այլ է կոմս դը Լանդեմոնի դիրքորոշումը։ Թէ՛ 1908-1909ի Օսմանեան Կայսրութիւնում տեղի ունեցած քաղաքական խմորումների եւ թէ՛ կիլիկեան կոտորածների շուրջ հաղորդելով մակերեսային տեղեկութիւններ, նա հայկական կոտորածների պատասխանատու համարում է միմիայն երիտթուրքերին։ Կիլիկիահայութեան բնաջնջման հարցում նման մօտեցումը միանգամայն համահունչ է 1908ից յետոյ Օսմանեան Կայսրութիւնում առկայ քաղաքական իրավիճակին տրւած նրա ընդհանուր գնահատականին, ըստ որի երիտթուրքերն իրենց ձեռքում են կենտրոնացրել «հասարակական գործեր»ի ղեկավարումը¹⁹²։ Կոմս դը Լանդեմոնը երիտթուրքերին բացայայտօրէն մեղադրում է հայկական կոտորածներ կազմակերպելու մէջ, շեշտում «կարգը վերականգնելու համար ուղարկուած զօրքեր»ի մասնակցութիւնը կողպուտին եւ սպանութիւններին¹⁹³։ Հեղինակը, շատ աւելի ծաւալում է Ֆրանսիացի միսիոնէրների՝ քրիստոնեաներին ցուցաբերած օգնութեան շուրջ, քան՝ բուն իրադարձութեան։ Ամէն դէպքում, նա մատնանշում է երիտթուրքերի՝ «Ադանայի կոտորածների» իրողութիւնը ժխտելու կամ առնուազն դրանց «կարեւորութիւնը բողարկելու» ուղղութեամբ գործադրած ջանքերը¹⁹⁴։ Քանի որ դը Լանդեմոնն ամբողջութեամբ անտեսում է սուլթանական վարչակարգի մեղսակցութիւնը կիլիկիահայութեան ոչնչացման փորձերին, նրա մեկնարանութիւնները մնում են, այդուհանդերձ, թերի։

Փաստօրէն միեւնոյն դիրքերից է 1909ի կիլիկեան կոտորածները մեկնարանում Ֆրանսիացի լրագրող, Ժուրնալ թերթի գինուորական թղթակից՝ Անրի Բարբին՝ գլխաւորապես 1915ի Մեծ Եղեռնի պատմութեանը նուիրուած գրքում։ Միանգամայն իրաւամբ նա մատնանշում է, որ իշխանութեան գալուց յետոյ երիտթուրքերը սոսկ շարունակել են կենսագործել իրենց կողմից գահընկէց արուած Արդուլ Համիդ Բ-ի մտայղացած՝ հայերի բնաջնջման ծրագիրը, ինչի մասին վկայում են

1909ի Ադանայի կոտորածները¹⁹⁶։ Սահմանափակելով որոշ մանրամասների թուլարկմամբ, Բարրին յանգում է, մեր կարծիքով ընդունելի հետեւութեան, այն է՝ միայն Եւրոպայից երկիւղն է խոչընդոտել «Թուրքիայի նոր տիրակալներին» ծաւալել կոտորածներն ամբողջ Հայաստանի տարածքում¹⁹⁸։

Պատասխանատուների բացայայտման հարցում Բարրիի մօտեցումը պայմանաւորուած է բացառապէս Հայոց Յեղասպանութեան հանդէպ որդեգրած նրա իրատեսական հայեցակարգով, ըստ որի իրադարձութեան նախակարապետն Արդուլ Համիդ Բ-ն է։ Հարկ է սակայն մեկնաբանել, որ ինչ վերաբերում է կիլիկեան կոտորածներին, որոնց ծաւալուն վերլուծութիւնն, ի դէպ, նրա խնդիրներում չի ընդգրկուել եւ ըստ այդմ՝ նրա շարադրանքում սոսկ թուրքիկ արտացոլուել են դրանց առնչուող որոշ հանգամանքներ, ապա՝ նա, այդուհանդերձ, հարցը քննարկում է կիլիկիահայութեան ոչնչացման ծրագրի պատասխանատուութիւնը միայն երիտթուրքերի վրայ բարդելու դիրքերից, շրջանցելով նախկին վարչակարգի դերի եւ մասնակցութեան հանգամանքը։

Կիլիկեան կոտորածները հարեւանցիօրէն, քննարկում է նաեւ Պ. Լուին՝ իրադարձութիւնների անմիջական տպաւորութեան տակ գրուած՝ երիտթուրքական յեղափոխութեանը նուիրուած արժէքաւոր յօդուածում¹⁹⁷։ Հեղինակը, ինչպէս եւ Ֆրանսիացի ժամանակակիցների գերակշռող մասը, մեծ տեղ է յատկացնում «խալամական մոլեռանդութեան»ը, ինչը, նրա կարծիքով, պատճառ է դարձել ապրիլեան կոտորածներին¹⁹⁸։ Միաժամանակ նա ամբողջութեամբ անտեսում է ոչ միայն դրանց իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով եւ երիտթուրքերի ղեկավար դերը, այլեւ նրանց մասնակցութիւնն իրադարձութեանը։ Այս առիթով նա յստակօրէն յայտնում է իրականութեանն ամէնեւին չհամապատասխանող իր կարծիքը. «Ոչինչ չի ապացուցում, որ Ալեքսանդրէտի Ծոցի կոտորածներն առնչուում են յեղափոխութեանը, եւ որ այլ ժամանակներում դրանք չէին ծաւալուի շատ ատելի արագօրէն»։ Չկողմնորոշուելով կոտորածների պատճառների հարցում, հեղինակը կիլիկիահայութեան բնաջնջման միակ մեղաւորներ է ճանաչում «մոլեռանդ քրդեր»ին, որոնք առաջին անգամը չէ - ինչպէս նա նշում է - որ յարձակումներ են գործել հայերի վրայ¹⁹⁹։

Կիլիկեան կոտորածների փաստը հպանցիկ արձանագրում է Ի. Պոլը, որը սակայն կազմակերպիչների բացայայտման հարցում որոշակի կարծիք չի յայտնում²⁰⁰։ Այս հարցի շուրջ նրա դիրքորոշման մասին կարելի է սոսկ կռահել ելնելով 1908ին հաստատուած երիտթուրքերի իշխանու-

Թեան օրօք Արդուլ Համիդի՝ երկրում ունեցած դերին տուած նրա գնահատականից, ըստ որի՝ Սուլթանը նոր վարչակարգի վրայ ունեցել է «գերիշխող ազդեցութիւն», իսկ «նրա փորձը չի դադարել մատուցել կարեւոր ծառայութիւններ»:²⁰¹ Սրանից հետեւում է, որ թէեւ Պոլն այս հարցում պարզորոշ չի յայտնել իր կարծիքը, այնուամենայնիւ, 1909ի հայկական ջարդերի պատասխանատուների շարքում անուղղակիօրէն դասել է ե՛ւ Սուլթանին, ե՛ւ երիտթուրքերին:

Լ. Կոլլան հպանցիկ հայեացք նետելով 1909ին «յատկապէս Ադանայի տարածաշրջանում» տեղի ունեցած հայկական կոտորածների վրայ՝ որոնք մարդկանց յիշողութեան մեջ արթնացրել են 1895ի սարսափները՝ գերադասում է լուսթեամբ շրջանցել պատասխանատուների բացայայտման հարցը²⁰²:

ՀԱՄԻԴԵԱՆ ԵՒ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱՄՈՒԹԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հարկ է չանտեսել նաեւ Ֆրանսիացի այն պատմաբաններին, ովքեր անտեսելով 1909ի կիլիկիահայուլթեան կոտորածները, այնուամենայնիւ, հիմնաւորապէս բացայայտում են երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութեան էութիւնը, քանզի նրանց բացայայտող գնահատականները մեծապէս նպաստում են ճիշտ կողմնորոշուելու երիտթուրքերի վարած ազգային քաղաքականութեան ասպարէզում:

Երիտթուրքական յեղափոխութեանը եւ երիտթուրքերի քաղաքականութեանն ընդհանուր գծերով անդրադառնում է Արեւելեան հարցի պատմութեան յայտնի գիտակ Ռընէ Պինոնը, որն ուսումնասիրութեան շրջանակից դուրս է թողնում այս կամ այն քրիստոնեայ ժողովրդի հանդէպ երիտթուրքերի վարած ցեղասպան քաղաքականութեան մանրամասները, սակայն, փոխարէնը, խօսքը հանգամանօրէն կենտրոնացնում է ինչպէս երիտթուրքական շարժման, այնպէս էլ 1908ի յեղափոխութեան ազգայնամոլ էութեան վրայ²⁰³: Թուրքերին նա համարում է ռազմատենչ ժողովուրդ, որը 1908ի յեղափոխութիւնն իրականացրել է ելնելով շատ աւելի իր ազգայնամոլութիւնից, անկախութիւնը պահպանելու ձգտումից, քան յանուն քաղաքական ազատութեան ձեռք բերման²⁰⁴:

Պինոնն իրաւամբ ընդհանրութիւն է տեսնում մի կողմից Արդուլ Համիդի վարած մահմեդականացման եւ օսմանացման քաղաքականութեան, իսկ միւս կողմից միեւնոյն քաղաքականութեանն ընդհանուր գծերով հետամուտ երիտթուրքերի միջեւ, սակայն միաժամանակ մատնանշում է, որ նրանց գործունէութեան հիմնական տարբերութիւնը

յանգում էր սոսկ կիրառման միջոցներին, այլ ոչ թէ նպատակներին²⁰⁶։ Ի տարբերութիւն այլոց՝ Պինոնը յաւուր պատշաճի արժեւորում է խիստ էական մի հանգամանք՝ շեշտում է եւ իրաւացիորէն քննադատում երիտթուրքերի կողմից օսմանացման քաղաքականութեան կիրառումը։ Յղելով նրանց ծրագիրը, որտեղ ամրագրուած է օսմանացման քաղաքականութեան կիրառման անհրաժեշտութիւնը, նա այն մեկնարանում է ոչ այլ կերպ, քան իրեւ Օսմանեան Կայսրութիւնում «այլազգիների ոչնչացում»²⁰⁶։

Պինոնի անուրանալի արժանիքներից է նաեւ պանիսլամիզմի ակունքների բացառապատման փորձը։ Ուսումնասիրելով թուրք ժողովրդի հոգեբանութիւնը, նա մատնացոյց է անում այն փաստը, որ Օսմանեան Կայսրութիւնում «հայրենիք» եւ «ազգ» հասկացութիւնները եղել են համարժէք, ուստի՝ «ազգային հայրենասիրութեան» վերելքն, այս պայմաններում, կարող էր իրրեւ հետեւանք յանգեցնել միայն «պանիսլամիզմի»։ Արդիւնքում, նա հաւաստում է, որ ըստ «թուրք գիւղացու» հոգեբանութեան՝ «մահմեդականը եղբայր է, քրիստոնեան՝ թշնամի, Սուլթանը՝ տէր»²⁰⁷։

Պինոնի իրատեսական եզրակացութիւնները, որոնց հնարաւոր չէ առարկել, հիմնաւորում են երիտթուրքերի քաղաքականութեան ազգայնամոլ ընդլթը, որը չյապաղեց իրեն զգալ տալ 1909ի կիլիկիահայութեան ոչնչացման պարագայում։

Դ. Գիորգիադէսն ուշադրութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս բալկանեան ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականութեան վրայ։ Համեմատականներ անցկացնելով երիտթուրքական եւ համիդեան վարչակարգերի միջեւ, նա բազմիցս նշում է, որ քաղաքական նոր ուժերի իշխանութեան հաստատումից ի վեր՝ Օսմանեան Կայսրութեան տարածքում շարունակւում էին կիրառուել «նախկին ահաբեկչական վարչակարգի ամենամոռկալի գործելամիջոցները»²⁰⁸, քանզի երիտթուրքերը պահպանել էին նախորդների բոլոր սովորոյթները եւ աւանդոյթները, որոնցից, ի դէպ, յեղափոխութիւնից առաջ տուժել էին առաջին հերթին իրենք²⁰⁹։

Գիորգիադէսը երիտթուրքերի որդեգրած օսմանացման անիրագործելի քաղաքականութիւնն իրաւամբ համարում է ուտոպիա եւ գտնում, որ հարկ էր պատմական անցեալից ոչինչ չհասկանալ՝ նման մտադրութեան իրականացմանը հաւատ ընծայելու համար²¹⁰։ Երիտթուրքերից նա առանձնացնում է «մոլեռանդ ազգայնամոլներ»ին եւ «շովինիստ-

ներ»²¹¹, որոնց համարում է քաղաքակրթութեան ու առաջադիմութեան երդուեալ թշնամիներ²¹²:

Ամբողջ խորութեամբ ըմբռնելով, մասնաւորապէս քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ նրանց ազգայնամոլ քաղաքականութեան էութիւնը, հեղինակը գտնում է, որ նոր վարչակարգի հիմքում խարսխուած էին «կայսրութեան քրիստոնեաների հանդէպ դրսեւորուող վայրենի կրքերը»²¹³: Նրա կարծիքով, իշխանափոխութիւնը թուրքիայում ոչնչի, բայց էութեան չի յանգեցրել, իսկ իշխանութիւնը գրաւած «ախարեկիչների բանակը» որդեգրել է՝ «պատերազմ՝ քրիստոնեաների [դէմ]» նշանաբանը²¹⁴: 1909ի կոտորածները կիլիկիայում շատ աւելի, քան որեւէ այլ իրադարձութիւն, հաւաստում են նրա հիմնական եզրակացութիւնների իրատեսութիւնը:

Յայտնի հրապարակախօս Վիկտոր Բերարը տնարբերութիւն չի նշմարում քրիստոնեայ հպատակների նկատմամբ Օսմանեան զանազան վարչակարգերի կիրառած քաղաքականութեան միջեւ: Օսմանեան կայսրութիւնում միմեանց յաջորդած վարչակարգերին եւ քաղաքական ուժերին քաջածանօթ հեղինակը միանգամայն իրաւացիորէն գտնում է, որ անկախ որդեգրած գաղափարախօսութիւնների միջեւ առկայ տարբերութիւններից, Օսմանեան իշխանութիւնները գործնականում յանգել են համանման արդիւնքների: Թուրքական նուաճումից ի վեր, ինչպէս նա նշում է, սուլթանութիւնը (sultanat) լինելով «Ֆէոդալական, բիրոկրատական, սահմանադրական, համիդեան թէ երիտթուրքական, թում է, թէ Մակեդոնիայում եղել է միայն վայրագութիւնների վարչակարգ»²¹⁵: Այս հակիրճ, սակայն դիպուկ գնահատականը միանգամայն բնորոշ է նոյն պետութեան Արեւմտեան Հայաստանում եւ կիլիկիայում վարած քաղաքականութեանը: Դրա վառ ապացոյցն են 1909ի կոտորածները, որոնք, սակայն, դուրս են մնում Բերարի ուշադրութիւնից:

Երիտթուրքերի քաղաքականութիւնն ազգային հարցում անկողմնակալօրէն, սակայն կրկին առանց կիլիկիահայութեան ողբերգութեանն անդրադառնալու, քննարկում է ռազմական գործիչ Բուկարէյը, որը, սակայն, խնդիրը մեկնարանում է խիստ սահմանափակ տեսանկիւնից՝ պարփակելով այն քրիստոնեաների հանդէպ մահմեդական բնակչութեան անհանդուրժողականութեան շրջանակում: Հոգեբանական այս հանգամանքով է նա բացառապէս պայմանաւորում իշխանութեան գալուց քիչ անց երիտթուրքերի հրաժարումն իրենց իսկ սկզբունքներից եւ «երերուն իշխանութիւնն ամրապնդելու» նրանց ջանքերը՝ Մեհմէդ Բ-ի եւ Սուլէյմանի ժամանակներին վերադառնալու միջոցով: Նա հարե-

լանցիօրէն ակնարկում է օսմանացման քաղաքականութեան կիրառման եւ դրա ձախողման մասին, իրաւամբ նշում, որ ազգային հարցում երիտթուրքերի գլխաւոր նպատակը եղել է «գեաւորներին» պատկանող նահանգների մահմեդականացումը: Վկայակոչելով բալկանեան ժողովուրդների հանդէպ երիտթուրքերի վարած ցեղասպան քաղաքականութեան օրինակը, հեղինակը հիմնաւորապէս ապացուցում է, որ այն իրականացում էր գլխաւորապէս հպատակ ժողովուրդների բնաջնջման եղանակով²¹⁶: Ակներեւ է, որ երիտթուրքերի ազգային քաղաքականութեանը Բուկարէշի տուած գնահատականներն ընդհանուր առմամբ համահունչ են կիլիկիահայութեան հանդէպ նրանց դրսեւորած վայրագ վերաբերմունքին:

Ազգային հարցում երիտթուրքական վարչակարգի քաղաքականութեանը բացայայտիչ գնահատականներ են տրուած նաեւ անանուն հեղինակի *La Vérité sur le Régime Constitutionnel des Jeunes-Turcs. Comment il a été Compromis* գրքում²¹⁷: Թէեւ հեղինակն ամբողջութեամբ շրջանցում է քաղաքական նոր ուժերի հայահալած քաղաքականութիւնը, սակայն բալկանեան ժողովուրդների նկատմամբ նրանց վարած ազգայնամոլ քաղաքականութեան հիման վրայ հիմնաւորապէս բացայայտում է նոր վարչակարգի իրական դիմագիծը: Գործունէութեան սկզբնական շրջանում բունի օսմանացմանը հետամուտ երիտթուրքերի քաղաքականութիւնը համարելով «մանկամիտ եւ վտանգաւոր ուտոպիա», հեղինակը համոզիչ փաստերով ապացուցում է, որ նրանք կարճ ժամանակամիջոցում հեղինակագրկուել են ազգային փոքրամասնութիւնների աչքում: Նա գտնում է, որ նրանցից ոչ մէկն այլեւս ցանկութիւն չի դրսեւորի երբեւէ սատարելու երիտթուրքերին, ինչպէս 1909ի սուլթանական խռովութեան ճնշման ժամանակ²¹⁸, քանզի, ինչպէս իրաւամբ մեկնարանում է հեղինակը, սահմանադրական վարչակարգի հաստատումից ի վեր ոչ-մահմեդական ժողովուրդները ճաշակել են միայն անարդարութիւններ, ապօրինութիւններ եւ դժբախտութիւններ²¹⁹: Վկայակոչելով երիտթուրքերի ցեղասպան քաղաքականութեանն առնչուող բազմապիսի փաստեր, նա յանգում է միակ հնարաւոր հետեւութեան- սահմանադրական վարչակարգն իրեն դրսեւորել է շատ աւելի վատթար ձեւով, քան Արդուլ Համիդի վարչակարգը²²⁰: Կիլիկիահայութեան հանդէպ երիտթուրքերի քաղաքականութիւնը կարող է միայն հիմնաւորել այս իրատեսական, անկողմնակալ եւ իրականութեանն ամբողջութեամբ համապատասխանող հետեւութիւնը:

Միաժամանակ մեզ հետաքրքրող ժամանկաշրջանում Ֆրանսիայում լոյս են տեսել գրքեր, որոնց հեղինակներն ամբողջութեամբ անտեսել են ոչ միայն 1909ի կիլիկիահայութեան կոտորածները, այլև չեն անդրադարձել երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութեան մեկնարանութեանն առհասարակ²²¹ :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, հայեացք նետելով 1909ին կիլիկիայում եւ յարակից տարածքներում տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան հերթական փուլին նուիրուած Ֆրանսիացի հեղինակների աշխատութիւնների վրայ, հարկ ենք համարում, եզրափակելուց առաջ ընդգծել, որ դրանք մեծապէս նպաստել են իրադարձութեան շուրջ մանրամասն տեղեկատուութեան հաղորդմանը՝ եւրոպական հանրութեանը: Ելնելով տարբեր հեղինակների առաջադրած ոչ-սպառիչ, այդուհանդերձ, համանման մեկնարանութիւններից (մասնաւորապէս, երիտթուրքերին պատասխանատուութիւնից գերծ պահելու, իրադարձութիւնը կրօնական շղարշով պարուրելու խնդիրներում), կարելի է ենթադրել, որ դրա հիմնական պատճառը եղել է կիլիկեան կոտորածների շուրջ ամբողջական տեղեկատուութեան բացակայութիւնը: Չնայած այս հանգամանքին, նրանց վկայակոչած փաստերը, արդիւնքում, ոչ միայն նպաստում են երիտթուրքական եւ համիդեան վարչակարգերի հայատեսաց քաղաքականութեան դիմազերծմանը, այլև ցոյց են տալիս, որ ժամանակակից ցեղասպանագէտների առաջադրած մի շարք էական դրոյթներ կիրառելի են 1909ի կիլիկիահայութեան բնաջնջման ծրագրի պարագայում եւս: Ըստ այդմ՝ համառօտակի նշենք ամենակարեւոր հանգամանքները-

ա. Ֆրանսիացի պատմաբանները՝ կիլիկիահայութեան ողբերգութեան առնչութեամբ շեշտում են Օսմանեան կենտրոնական իշխանութիւնների, ու յատկապէս տեղական պաշտօնեաների ղեկավար դերը եւ դրանով իսկ ընդգծում, որ կոտորածները տեղի են ունեցել պետական քաղաքականութեան մակարդակով: Յեղասպանագէտների գերակշռող մասը Յեղասպանութիւն է համարում այն իրադարձութիւնը, որը խարսխուած է պետական քաղաքականութեան վրայ²²² :

բ. Մեր քննարկած տարբեր աշխատութիւններում բազմիցս շեշտում է 1909ի կիլիկիահայութեան կոտորածների՝ կանխամտածուածութեան հանգամանքը, ինչը ցեղասպանագէտները համարում են Յեղասպանութեան իրրեւ երեւոյթի հիմնական բնորոշիչներից մին²²³ :

գ. Կոտորածների պատասխանատուութիւնը հայերի վրայ բարդելու հարցում, մերկացնելով Ջեւադի եւ Օսմանեան այլ պաշտօնեաների գործելամիջոցները, Ֆրանսիացի հեղինակները հիմնաւորում են ցեղասպանագիտութեան ասպարէզում առաջադրուած՝ Յեղասպանութիւնն իրականացնող կողմին միանգամայն բնորոշ՝ պատասխանատուութիւնը գոհերի վրայ բարդելու արատաւոր հակումին առնչուող թեզը: Այս հարցը մանրամասնօրէն մեկնարանել եւ հիմնաւորել է Իւ Տերնոնը. «Կան ժխտման բազմաթիւ եղանակներ... Այդուհանդերձ, երկու ասպարէզում բոլոր նրանք, ովքեր համակուած են ժխտման պաթոլոգիայով, որդեգրում են միեւնոյն ժխտողական դիրքորոշումը: Նրանք չեն ճանաչում զոհերի անմեղութիւնը, որոնց սպանելու համար մեղադրում են եւ իրենց վերագրելով անմեղութիւնը՝ այն օգտագործում են ըստ իրենց հայեցողութեան»²²⁴: Ըստ Ֆրանսիացի հեղինակների աշխատութիւնների՝ կարելի է համոզուել, որ 1909ի կիլիկիահայութեան բնաջնջումն իրականացնողների վարքագիծը համահունչ է անուանի ցեղասպանագէտի այս խիստ կարեւոր հայեցակարգային դրոյթին:

Ակնյայտ է, որ Ի. դարի 10ականների Ֆրանսիացի պատմաբանների ներդրումը 1909ի Հայոց Յեղասպանութեան հերթական փուլի ուսումնասիրութեան ասպարէզում ունի ոչ միայն ճանաչողական նշանակութիւն, այլեւ գիտական կարեւորութիւն, եւ Հայոց Յեղասպանութեան պատմութեան կեղծման յետնախորքի վրայ ձեռք է բերում մեծ այժմէականութիւն, քանզի հիմնաւորապէս դիմագերծում է գանազան կեղծարարների ոտնձգութիւնները հայ ժողովրդի պատմական անցեալի հանդէպ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Մ. Կարապետեան, Հայոց 1915-1916 թուականների Յեղասպանութեան Հարցերը Հայ Պատմագրութեան Մէջ, Երեւան, Գիտութիւն Հրատարակչութիւն, 1988, նաեւ՝ նոյնի՝ Հայոց 1915-1916 թուականների Յեղասպանութեան Հիմնահարցերը Յետխորհրդային Հայ Պատմագրութեան Մէջ, Երեւան, Գիտութիւն Հրատարակչութիւն, 2005, նաեւ՝ Ն. Յովհաննիսեան, Հայոց Յեղասպանութիւնը Արարական Պատմագիտութեան Քննական Լոյսի Ներքոյ, Երեւան, Զանգակ-97 Հրատարակչութիւն, 2004:
- ² Ռ. Սահակեան, «Հայկական Յեղասպանութեան Պատմութիւնը Ֆրանսիական Հրատարակչութիւններում», Ռ. Սահակեան, Յեղասպանութեան Պատմութիւնից, Երեւան, Հայաստան Հրատարակչութիւն, 1990, էջ 223-239, նաեւ՝ Վ. Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Ֆրանսիական Պատմագրութեան Եւ Հասարակական Մտքի Գնահատմամբ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ), Երեւան, Գիտութիւն Հրատարակչութիւն, 2005:

³ L. K. Etmekjian, "The Reaction of the Boston Press to the 1909 Massacre of Adana", *Armenian Review*, 1987, v. 40, N 4, էջ 61-74; V. Dadrian, "The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust", *Armenian Review*, 1988, v. 41, N 4, էջ 1-16; նոյնի՝ *Histoire du Génocide Arménien. Conflits Nationaux des Balkans au Caucase*, Paris, Editions Stock, 1996, էջ 301-309; R. H. Kévorkian, "Les Massacres de Cilicie d'Avril 1909", *La Cilicie (1909-1921). Des Massacres d'Adana au Mandat Français*. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, Annales de la Bibliothèque Nubar, 1999, էջ 7-142; նոյնի՝ *Le Génocide des Arméniens*, Paris, Odile Jacob, 2006; A. Arkun, "Les Relations Arméno-Turques et les Massacres de Cilicie de 1909" *L'actualité du Génocide des Arméniens Actes du Colloque Organisé par le Comité de Défense de la Cause Arménienne à Paris les 16, 17 et 18 Avril 1998*, Paris, Edipol, 1999, էջ 57-74; A. Asso, *Le Cantique des Larmes. Arménie, 1915. Paroles des Rescapés du Génocide*, Paris, La Table Ronde, 2005, էջ 29-31:

⁴ Հ. Ղազարեան, *Հայ ժողովրդի Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում, և առաջին, Երեւան, Տիգրան Մեծ Հրատարակչութիւն, 2004, էջ 66-76, նաեւ՝ Վ. Գ. Թունեան, Mladoturki I Armyanski Vopros, 1908-1912gg. (Երիտթուրքերը եւ Հայկական Հարցը, 1908-1912 թթ.) Երեւան, Հայոց Յեղասպանութեան Ինստիտուտ-Թանգարանի Հրատարակչութիւն, 2004, էջ 109-133, նաեւ՝ Ռ. Գասպարեան, Հայկական Կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երեւան, Գիտութիւն Հրատարակչութիւն, 2005, էջ 52-94:*

⁵ Y. Ternon, *L'État Criminel. Les Génocides au XX^e siècle*, Paris, Editions du Seuil, 1995, էջ 183:

⁶ Նոյն, էջ 235:

⁷ Asso, էջ 27:

⁸ Ղազարեան, էջ 66:

⁹ Նոյն, էջ 67, 73, 74, 75, 76:

¹⁰ R. Melson, "Problèmes Soulevés par la Comparaison entre le Génocide Arménien et l'Holocauste," *L'actualité du Génocide des Arméniens*, էջ 379, նոյնի՝ *Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago and London, Transaction Books, 1992, էջ 26: Նման հարցադրումն անհամատեղելի է Հայոց Յեղասպանութեան՝ իրրեւ երեւոյթի հանդէպ Մելսոնի դրսեւորած մտեցմանը, քանզի նա հակուած չէ նոյնիսկ 1890ականներին սանձազերծուած Հայ ժողովրդի բնաջնջման լայնածաւալ գործընթացը բնորոշելու իրրեւ մասնակի ցեղասպանութիւն (Melson, *Revolution and Genocide*, էջ 299): Դա կարելի է բացատրել սոսկ ամերիկացի պատմարանի, մեր կողմից անընդունելի, Հայոց Յեղասպանութեան շուրջ առաջադրած հայեցակարգի առանձնաշարժութեամբ, ըստ որի Հայ ժողովրդի ցեղասպանութիւնը, ինչպէս եւ մի շարք այլ ցեղասպանութիւններ, իրականացուել են դրանց նախորդած յեղափոխութիւնների արդիւնքում: Այս պայմաններում, Հայոց Յեղասպանութիւնը նա դիտոււմ է իրրեւ 1908ի երիտթուրքական յեղափոխութեան հետեւանքով 1915ին տեղի ունեցած իրադարձութիւն (Melson, *Revolution and Genocide*, էջ XVI):

¹¹ Տե՛ս օրինակ՝ Հ. Հ. Մարտիրոսեան, «Կիլիկիայի 1909 Թուականի Ապրիլի Հայկական Կոտորածը Եւ Երիտասարդ Թուրքիայի Պատասխանատուութեան Հարցը», *Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Երկրներ Եւ Ժողովուրդներ*, հ. V, Թուրքիա, Երեւան, Հայ-

կական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1970, էջ 317, նաև՝ D. Boyadjian, *Armenia, The Case of a Forgotten Genocide*, New Jersey, Educational Book Crafters, 1972, էջ 47, նաև՝ Ջոն Կիրակոսեան, *Երիտթուրքերը Պատմության Դատաստանի Առաջ (19րդ Դարի 90ական թթ.)*, Գիրք առաջին, Երևան, Հայաստան Հրատարակչություն, 1982, էջ 267-269, նաև՝ Dadrian, *Histoire du Génocide*, էջ 305-306, նաև՝ Kévorkian, "Les Massacres", էջ 141, նոյնի՝ *Le Génocide des Arméniens*, էջ 142-145, նաև՝ Ղազարեան, էջ 68, 74:

¹² Տե՛ս օրինակ՝ Մ. Վարանդեան, *Հ. Թ. Դաշնակցության Պատմություն*, Բ. Հատոր, Գա-հրէ, Երևան, 1950, էջ 16, նաև՝ Y. Ternon, *Les Arméniens. Histoire d'un Génocide*, Paris, Editions du Seuil, 1977, էջ 179, նաև՝ Ա. Մ. Համբարեան, «Կիլիկիայի 1909 թ. Հայկական Կոտորածները», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1988, թիւ 4, էջ 28, նա-եւ՝ D. R. Papazian, "Misplaced Credulity": Contemporary Turkish Attempts to Refute the Armenian Genocide" *Armenian Review*, 1992, v. 45, N 1-2, էջ 188, նաև՝ Ս. Պողոս-եան, Կ. Պողոսեան, *Հայկական Հարցի Եւ Հայոց Յեղասպանության Պատմություն*, Հ-առաջին, *Հայերի Բնաջնջման Օսմանեան Քաղաքականությունը*, Երևան, «Հրաչեայ Աճառեան» Համալսարանի Հայկական Հարցի Գրական Կենտրոն, 2000, էջ 556, նա-եւ՝ R. P. Adalian, "Adana: Massacres", *Le Livre Noir de l'Humanité. Encyclopédie Mondiale des Génocides*, Sous la direction de Israel Charny, Toulouse, Éditions Privat, 2001, էջ 81-82, նաև՝ Գասպարեան, էջ 93:

¹³ Christopher J. Walker, *Armenia. The Survival of a Nation*, London, Cron Helm, St Martin's Press, 1980, էջ 188, նաև՝ R. J. Rummel, *Statistics of Democide. Genocide and Mass Murder since 1900*, New Brunswick, Transaction Publishers, 1998, էջ 80:

¹⁴ Այդ մասին տե՛ս՝ Պողոսեան, էջ 21-48:

¹⁵ Այդ մասին տե՛ս՝ Ternon, *Les Arméniens. Histoire d'un Génocide*, էջ 174: Մի շարք պատմաբաններ չեն կողմնորոշուել Հեղինակի ինքնության բացայայտման հարցում (Մարտիրոսեան, էջ 308, նաև՝ Walker, էջ 49, նաև՝ Համբարեան, էջ 24: Ինձ անյայտ այս Հեղինակը չի բացառում, որ լինի ազգութեամբ Հայ՝ Ֆրանսիացի պատմաբան):

¹⁶ G. Brézol, *Les Turcs ont Passé la... Recueil de Documents, Dossiers, Rapports, Requêtes, Protestations, Supplices et Enquêtes Établissant la Vérité sur les Massacres d'Adana en 1909*, Paris, Poissy, 1911: Սոյն ժողովածուում ամփոփուած որոշ փաստաթղթեր ընդ-գրկուել են նաև՝ Թ. Թէրզեան, *Կիլիկիոյ Աղէտը*, Կ. Պոլիս, Ե. Ասատուրեան եւ որդիք, 1912 Հրատարակչության մէջ:

¹⁷ Brézol, էջ 13:

¹⁸ Տե՛ս՝ *Les Massacres d'Arménie. Témoignages des Victims*, Préface de G. Clemenceau, Paris, Editions du Mercure de France, 1896; *The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce*, New York and London, Causton and Sons, 1916:

¹⁹ Brézol, էջ 24: [Այս եւ մնացեալ մէջբերումները յղուածագրին կողմէ թարգմանուած են Ֆրանսերէն բնագիրներէն - ՈՒՄ.]:

²⁰ Նոյն, էջ 49:

²¹ Նոյն, էջ 73:

²² Նոյն, էջ 76:

²³ Նոյն, էջ 77:

²⁴ Նոյն:

²⁵ Նոյն, էջ 81:

²⁶ Նոյն, էջ 138:

²⁷ Նոյն, էջ 138-139:

²⁸ Նոյն, էջ 140:

²⁹ Նոյն, էջ 141:

³⁰ Նոյն:

³¹ Տատրեանի Համոզմամբ՝ լրագրի հրատարակիչները «մեծ պատասխանատուութիւն են կրում» քաղաքում սանձազերծուած կոտորածների երկրորդ փուլի նախապատրաստման համար (V. Dadrian, "The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust", *Armenian Review*, 1988, v. 41, N 4, էջ 6: Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում պրոֆեսոր Տատրեանին՝ յղուածի առանձնատիպը մեղ տրամադրելու համար): Այս մասին մանրամասն տե՛ս նաեւ՝ Kévorkian, "Les Massacres de Cilicie d'Avril 1909", էջ 84-87:

³² Brézol, էջ 142:

³³ Նոյն, էջ 143:

³⁴ Նոյն:

³⁵ Նոյն, էջ 147:

³⁶ Նոյն, էջ 149:

³⁷ Նոյն:

³⁸ Նոյն, էջ 150:

³⁹ Այդ մասին տե՛ս՝ Dadrian, *Histoire du Génocide*, էջ 305, նաեւ՝ Kévorkian, "Les Massacres de Cilicie d'Avril 1909", էջ 141, նաեւ՝ Փասպարեան, էջ 55-56:

⁴⁰ Brézol, էջ 179:

⁴¹ Տե՛ս՝ Dadrian, *Histoire du Génocide*, էջ 305:

⁴² Brézol, էջ 180:

⁴³ Նոյն, էջ 181:

⁴⁴ Նոյն, էջ 153:

⁴⁵ Նոյն, էջ 154-155:

⁴⁶ Նոյն, էջ 157-158:

⁴⁷ Նոյն, էջ 164, 179:

⁴⁸ Նոյն, էջ 152:

⁴⁹ Նոյն, էջ 180:

⁵⁰ Թէպէտ այս վարկածն անկարող ենք հիմնաւորել որեւէ փաստով, այնուամենայնիւ, նշենք, որ կիլիկեան կոտորածների հետաքննութիւնն Ադանայում վարած՝ Օսմանեան խորհրդարանի Հայագիտ. երիտթուրք պատգամաւոր Յակոբ Պապիկեանն իր գեկուցազրուած հաւաստել է կոտորածներին երիտթուրքերի մեղսակցութիւնը: Այդ մասին՝ ստորեւ:

⁵¹ Brézol, 89:

⁵² Նոյն:

⁵³ Նոյն, էջ 90:

⁵⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս՝ *Les Massacres d'Adana et nos Missionnaires. Récit de Témoins*, Lyon, Paquet, 1909; J. d'Annezay, *Au Pays des Massacres. Saignée Arméniennes de 1909*, Paris, Bloud et C^{ie}, 1910, էջ 25-26:

⁵⁵ Brézol, էջ 95:

- ⁵⁶ Այն գտնուում է Հասան Բէլլիի մաս, Ջերէլ Բերեքէթ սանջակում:
- ⁵⁷ Նոյն, էջ 96:
- ⁵⁸ Նոյն, էջ 109:
- ⁵⁹ Նոյն, էջ 99:
- ⁶⁰ Նոյն, էջ 104:
- ⁶¹ Նոյն:
- ⁶² Նոյն, էջ 64:
- ⁶³ Նոյն, էջ 63:
- ⁶⁴ Նոյն, էջ 129:
- ⁶⁵ Նոյն, էջ 116:
- ⁶⁶ Նոյն, էջ 123:
- ⁶⁷ Նոյն:
- ⁶⁸ Նոյն, էջ 204, 206:
- ⁶⁹ Նոյն, էջ 208:
- ⁷⁰ Նոյն, էջ 346:
- ⁷¹ Նոյն, էջ 348:
- ⁷² Նոյն, էջ 251:
- ⁷³ Նոյն:
- ⁷⁴ Այս մասին տե՛ս՝ Kévorkian, "Les Massacres de Cilicie d'Avril 1909", էջ 108:
- ⁷⁵ Brézol, էջ 212-213, 215:
- ⁷⁶ Նոյն, էջ 227, 229:
- ⁷⁷ Նոյն, էջ 233:
- ⁷⁸ Նոյն, էջ 235:
- ⁷⁹ Նոյն, էջ 215, 221:
- ⁸⁰ Նոյն, էջ 220:
- ⁸¹ Պապիկեանի նշանակման մասին տե՛ս՝ Kévorkian, "Les Massacres de Cilicie d'Avril 1909", էջ 107-108:
- ⁸² Նրա զեկուցագրի ամբողջական բնագիրը տե՛ս՝ "Rapport en Date du 7 Juin 1325 (1909) de Feu Babiguian Eeffendi, Député d'Adrianople, sur les Massacres d'Arménie" *La Situation des Arméniens en Turquie Exposée par des Documents. 1908-1902*, III, [Constantinople, 1913], էջ 7-26: Տե՛ս նաև Հայերէն Թարգմանութիւնը՝ Ատանայի Եղեռնը: Տեղեկագիր Եակոբ Պապիկեանի (Օսմանեան Երեսփոխան Հայրենէի): Զրանսիս աը Փրեսանսէի Յառաջարանով, Կ. Պոլիս, Կիլիկիա Գրատուն, 1919:
- ⁸³ Brézol, էջ 240:
- ⁸⁴ Նոյն, էջ 243:
- ⁸⁵ Ատանայի Եղեռնը, էջ 42: Տե՛ս նաև "Rapport en Date du 7 Juin 1325 (1909)", էջ 26:
- ⁸⁶ Brézol, էջ 242:
- ⁸⁷ Նոյն, էջ 244:
- ⁸⁸ Նոյն, էջ 263:
- ⁸⁹ Նոյն, էջ 269:
- ⁹⁰ Նոյն, էջ 179:
- ⁹¹ Նոյն, էջ 274, 278, 279:
- ⁹² Նոյն, էջ 266, 268, 275, 276:
- ⁹³ Նոյն, էջ 280:

⁹⁴ Մոյն յօղուածն արդէն պատրաստ էր տպագրութեան, երբ Մոնպելիէի Պոլ Վալերի Համալսարանի պրոֆեսոր Պիէր Պարրայը մեզ տրամադրեց Ազանայի կոտորածների պատմութեան նուիրուած ֆրանսիական հրատարակութիւններից մէկի պատճէնը (Jean d'Annezy, *Au Pays Des Massacres*: Իր երախտագիտութիւնը յայտնելով պրոֆեսոր Պարրային, հեղինակը հայցում է ընթերցողի ներողամտութիւնը, խոստանալով նիւթը օգտագործել իր յաջորդ հրատարակումներում:

⁹⁵ *Les Massacres d'Adana et nos Missionnaires*:

⁹⁶ Նոյն, էջ 4:

⁹⁷ Նոյն, էջ 5:

⁹⁸ Նոյն, էջ 33, 36-37:

⁹⁹ Նոյն, էջ 45-46:

¹⁰⁰ Նոյն, էջ 5:

¹⁰¹ Նոյն, էջ 42:

¹⁰² Նոյն:

¹⁰³ Նոյն, էջ 48:

¹⁰⁴ Տե՛ս օրինակ՝ Պօղոսեան, էջ 173-201:

¹⁰⁵ *Les Massacres d'Adana et nos Missionnaires*, էջ 48:

¹⁰⁶ A. Adossidès, *Arméniens et Jeunes-Turcs. Les Massacres de Cilicie*, Paris, Stock, 1910: Հայոց Յեղասպանութեան գործընթացի նկատմամբ Ադոսիդէան անթաքայց հետաքրքրութիւն է հանդէս բերել դեռևս Ի. դարի սկզբին, երբ Դորիս կեղծանունամբ հրատարակել է Արդուլ Համիդին նուիրուած ուսումնասիրութիւն (G. Dorys, *Abdul-Hamid Intime*, Paris, Editions Stock, 1901; 2^{ème} éd., 1903): Այդ մասին տե՛ս՝ Պօղոսեան, էջ 92-93:

¹⁰⁷ Adossidès, էջ 6:

¹⁰⁸ Նոյն, էջ 42:

¹⁰⁹ Նոյն, էջ 43:

¹¹⁰ Նոյն:

¹¹¹ Նոյն:

¹¹² Նոյն, էջ 98:

¹¹³ Չոհերի թուարանակի շուրջ պատմարանները յայտնել են իրարամերժ կարծիքների Տատրեանն, օրինակ, գտնում է, որ հայերն ունեցել են քանհինգ հազար զոհ (Dadrian, *Histoire du Génocide*, էջ 305):

¹¹⁴ Adossidès, էջ 99, 102:

¹¹⁵ Նոյն, էջ 105:

¹¹⁶ Գասպարեան, էջ 55-56:

¹¹⁷ Adossidès, էջ 16-20:

¹¹⁸ Նոյն, էջ 19:

¹¹⁹ Նոյն, էջ 27:

¹²⁰ Նոյն, էջ 29:

¹²¹ Նոյն, էջ 49:

¹²² Նոյն:

¹²³ Նոյն, էջ 9:

¹²⁴ Նոյն, էջ 11:

¹²⁵ Նոյն, էջ 35:

- 125 Նոյն, էջ 35:
- 126 Նոյն, էջ 61-62, 72:
- 127 Նոյն, էջ 25:
- 128 Նոյն, էջ 25:
- 129 Նոյն, էջ 54-56, 70-71, 94:
- 130 Նոյն, էջ 70:
- 131 Նոյն, էջ 8:
- 132 Նոյն, էջ 8-9:
- 133 Նոյն, էջ 22: Այս մասին մանրամասն տե՛ս՝ Ե. Թ. Թորոսեան, *Կիլիկիայի Հայերի Ազգային-Ազատագրական Շարժումները 1919-1920 թթ.*, Երևան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1987, էջ 28-29:
- 134 Adossidès, էջ 53:
- 135 Նոյն, էջ 11-12:
- 136 Նոյն, էջ 138:
- 137 Նոյն:
- 138 Նոյն, էջ 93:
- 139 *Մանրամասն տե՛ս՝ Թունեան, էջ 113-114:*
- 140 Adossidès, էջ 142:
- 141 Նոյն, էջ 47, 64:
- 142 Նոյն, էջ 64:
- 143 Նոյն, էջ 16:
- 144 *Նա խօսում է այլոց մասին եւս: Նոյն, էջ 64-65, 90, 92:*
- 145 Նոյն, էջ 34:
- 146 Նոյն:
- 147 Նոյն, էջ 36:
- 148 Նոյն, էջ 42, 80-81:
- 149 Նոյն, էջ 81-82, 88:
- 150 Նոյն, էջ 6:
- 151 Նոյն, էջ 136:
- 152 *Իրականում եօթ՝ Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Աւստրիա, Ռուսաստան, ԱՄՆ:*
- 153 Նոյն:
- 154 *Այս մասին մանրամասն տե՛ս՝ Dadrian, էջ 307-308:*
- 155 Adossidès, էջ 37:
- 156 Նոյն, էջ 82:
- 157 G. Vayssié, "Les Vêpres Ciliciennes" *La Revue (Ancienne "Revue des Revues")*, 1^{er} Novembre 1909, N 21, էջ 75:
- 158 Նոյն:
- 159 Նոյն, էջ 78:
- 160 Նոյն, էջ 80:
- 161 Նոյն:
- 162 Նոյն, էջ 81:
- 163 Նոյն, էջ 81-82:
- 164 Նոյն, էջ 86:

- 165 Նոյն:
- 166 Նոյն: Այդ մասին տե՛ս՝ վերը:
- 167 Նոյն, էջ 87:
- 168 Նոյն, էջ 91:
- 169 Նոյն, էջ 77:
- 170 Նոյն, էջ 75:
- 171 Նոյն, էջ 77, 88:
- 172 R. Moulin, *Force et Faiblesse de la Jeune Turquie*, Paris, Plon-Nourrit et C^{ie}, 1910. Մուլինի գիրքը տպագրուել է նախ *Revue Hebdomadaire Հանդէսում*, 30 Avril 1910, N 18, էջ 593-626 եւ 7 Mai 1910, N 19, էջ 53-80:
- 173 Moulin, էջ 16-17:
- 174 Նոյն, էջ 18:
- 175 Տե՛ս՝ Եւրի Պետրոսեան, *Mladoturetskoye Dvijenie (Երիտթուրքական շարժումը), Մոսկուա, Գիտութիւն Հրատարակչութիւն, 1971, էջ 308, նաեւ՝ Վ. Ի. Շպիլկովա, Mladoturetskaya Revolutsia 1908-1909 gg. (1908-1909 թթ. երիտթուրքական յեղափոխութիւնը), Մոսկուա, Գիտութիւն Հրատարակչութիւն, 1977, էջ 127:*
- 176 Arkun, էջ 58:
- 177 Այդ մասին տե՛ս՝ Շպիլկովա, էջ 38, նաեւ՝ Ternon, *Empire Ottoman. Le Déclin, la Chute, l'Effacement*, Paris, Michel de Maule, 2005, էջ 233:
- 178 Moulin, էջ 20:
- 179 Նոյն, էջ 30-31, 32:
- 180 Նոյն, էջ 33:
- 181 Նոյն, էջ 19:
- 182 Նոյն, էջ 26:
- 183 Նոյն:
- 184 Նոյն, էջ 26, 28:
- 185 Նոյն:
- 186 Նոյն, էջ 27:
- 187 Նոյն:
- 188 Նոյն, էջ 30:
- 189 A. Sarrou, *La Jeune-Turquie et la Révolution*, Paris-Nancy, Berger-Levrault, 1912, էջ 89:
- 190 Նոյն, էջ 89-90:
- 191 Նոյն, էջ 90:
- 192 C[om]te de Landemont, *L'Europe et la Politique Orientale, 1878-1912*, Paris, Plon-Nourrit et C^{ie}., 1912, էջ 268:
- 193 Նոյն, էջ 279:
- 194 Նոյն:
- 195 H. Barby, *Au Pays de l'Épouvante. L'Arménie Martyre*, Préface de M. Paul Deschanel, Paris, Albin Michel, 1917, էջ 13:
- 196 Նոյն:
- 197 P. Louis, "Essai sur la Révolution Turque", *Mercure de France*, 1^{er} Mai 1909, N 285:
- 198 Նոյն, էջ 237:
- 199 Նոյն, էջ 240:

- ²⁰⁰ I. Paul, *La Rénovation de l'Empire Ottoman. Affaires de Turquie*, Paris, Académique Perrin et C^{ie}., 1909, էջ 294.
- ²⁰¹ Նոյն, էջ 268.
- ²⁰² *Histoire de l'Empire Ottoman Jusqu'à la Révolution de 1909*, par L. Collas, quatrième édition, revue et mise au courant par E. Driault, Paris, [1909], էջ 187.
- ²⁰³ R. Pinon, *L'Europe et la Jeune Turquie. Les Aspects Nouveaux de la Question d'Orient*, Paris, Académique Perrin et C^{ie}., 1911, էջ 77, 121, 122.
- ²⁰⁴ Նոյն, էջ 107.
- ²⁰⁵ Նոյն, էջ 77.
- ²⁰⁶ Նոյն, էջ 122.
- ²⁰⁷ Նոյն, էջ 134.
- ²⁰⁸ D. Georgiadès, *La Régénération de la Turquie est-elle Possible?* Paris, Chaix, 1909, էջ 33.
- ²⁰⁹ Նոյն, էջ 41.
- ²¹⁰ Նոյն, էջ 56.
- ²¹¹ Նոյն, էջ 44, 56.
- ²¹² Նոյն, էջ 59.
- ²¹³ Նոյն, էջ 41.
- ²¹⁴ Նոյն, էջ 90.
- ²¹⁵ V. Bérard, *La Mort de Stamboul. Considérations sur le Gouvernement des Jeunes-Turcs*, Paris, Armand Colin, 1913, էջ 209.
- ²¹⁶ L¹-Colonel Breveté Boucabeille, *La Guerre Turco-Balkanique 1912-1913. Thrace-Macédoine-Empire*, Paris, Chapelot, 1913, էջ 27-28.
- ²¹⁷ *La Vérité sur le Régime Constitutionnel des Jeunes-Turcs. Comment il a été Compromis. Lettre Adressée à un des Membres les Plus Influents du Comité Union et Progrès par F. - f O.*, Paris, Plon-Nourrit et C^{ie}, 1911.
- ²¹⁸ Նոյն, էջ 14, 19.
- ²¹⁹ Նոյն, էջ 19.
- ²²⁰ Նոյն, էջ 43.
- ²²¹ A. Durand, *Jeune Turquie. Vieille France*, Paris, 1909; T. Blancard, *Autour de la "Jeune Turquie"*, Marseille-Paris, 1911; Muçafir, *Notes sur la Jeune Turquie*, Bordeaux, Recueil Sirey, 1911; E. Lemonon, *L'Europe et la Politique Britannique (1882-1911)*, Paris, Félix Alcan, 1912; E. Driault, *La Question d'Orient Depuis ses Origines Jusqu'à la Grande Guerre*, septième édition, Paris, Félix Alcan, 1917.
- ²²² Տե՛ս օրինակ՝ B. Harff, "The Etiologie of Genocide, Genocide and the Modern Age", *Etiologie and Case Studies of Mass Death*, edited by I. Wallimann and M. N. Dobkowski, New York, Greenwood Press, 1987, էջ 48; F. Chalk & K. Jonassohn, *The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies*, New Haven & London, Yale University Press, 1990, էջ 23, 26; R. Melson, *Revolution and Genocide*, էջ 26; Y. Ternon, *L'État Criminel*, էջ 65-78; R. J. Rummel, "Le Nouveau Concept de Démocide. Le Livre Noir de l'Humanité," *Encyclopédie*, էջ 48-55; I. L. Horowitz, *Taking Lives. Genocide and State Power*, Fifth Edition, Revised, New Brunswick & London, Transaction Publishers, 2002, էջ 14, 23.

²²³ Տե՛ս օրինակ՝ Chalk & Jonassohn, էջ 26, նաև՝ Ternon, էջ 91-92, նաև՝ J. Balint, I. W. Charny, "Définitions du Génocide. Le Livre Noir de l'Humanité," *Encyclopédie*, էջ 43-44: Այս հարցի շուրջ պատմաբանների առաջադրած տեսակետների մասին մանրամասն տե՛ս՝ Ռ. Սաֆրաստեան, «Ցեղասպանութեան Մագուճնարանութեան Հարցի Շուրջ՝ Դիտաւորութեան Հանգամանքի Կիրառումը», *Հայոց Մեծ Եղեռն - 90, Յօշուածների Ժողովածու, պատասխանատու խմբագիր՝ Արամ Սիմոնեան, Երևան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2005, էջ 367-371:*

²²⁴ Yves Ternon, *L'innocence des Victims. Au Siècle des Génocides*, Paris, Desclède Brouwer, 2001, էջ 134:

FRENCH HISTORIOGRAPHY ON THE
ARMENIAN MASSACRES OF 1909 IN CILICIA
(Summary)

VARUJAN POGHOSIAN

The article sheds light on the approach and assessment of French historiographers on the Armenian massacres of 1909 committed in Cilicia. The author notes that these massacres were organized and perpetrated by both the Young Turks and the ancient regime and constitute an important link in the process of the Armenian Genocide (1894-1922). In fact, the French authors characterize the killings of 1894-96 and 1909 as an introduction to the Armenian Genocide of 1915.

Poghosian underlines the fact that after a short period in the 1910s, the Armenian massacres of 1909 were rarely brought to light and discussed by French historiographers until the early 1990s.

In line with highlighting some 14 books, document compilations, and articles the author puts under the limelight two books, that of Petros Aznovour, who in 1911, under the nickname of Georges Brézol, published *Les Turcs ont passé la...* in Paris, and that of the French journalist A. Adossidès, who published his book *Arménines et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie*, in Paris in 1910.

Poghosian assesses and interprets the documents published in the first book, which is a compilation of documents, numerous reports, letters, protests and other notes of various sources. The book reflects the diverse points of view of Turkish officials, Armenian clerics and foreign missionaries.

Poghosian notes as well that the Armenian massacres of 1909 were hinted at in various studies related to the history of the Ottoman Empire. These books assessed the Armenian massacres of 1909 in the framework of state policy towards the national minorities.

The author stresses that all these French authors affirm and attest these massacres. However, they vary in assessing the damage, the casualties, and particularly in pinpointing both the organizers and perpetrators. Ultimately they differ in putting the responsibility on the old regime of Abdul Hamid or the new regime of the Young Turks.